



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22.183

ՅԱՐԵ «Ս. ԼԻՍԻԳԵԱՆ Ի. ԸՆԿ.» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՅՈՒՆԵԿԵ

ԿԱՊԻՏԱՆ

ԵԿ

ԿԱՊԻՏԱՆԻՄ

(6)



330.1

9-28

15 JAN 2010

۱۵۷

ՔՐԱՏ. ԸՆԿԵՐ. „ԱՅ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.“

Սկսել է մի շաբք թարգմանական գեղարվեստական մեծ գրւածքների հրատարակություն

«ՕՏԱՐԵԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ»

բԵՐԿԱՑՈՒՅՑ ՎԵՐՏԱՎՐԴԻ ՏԱԿ

Թարգմանութեանը մտնեակցէլու են առաջնարդութեար.

ԱՌԱՋԻՆ ՎԵՑՀԱՏՈՐԵԱԿԻ

մէջ մտնում են հետեւալ աշխատութիւններ.

1. Երկման-Շատրվան—«Մի գիշղԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ», վէպ 18-րդ դարի վերջի ֆրանսիական կեանքից:
 2. Վօյնիչ—«ԲՈՒԽ», վէպ երեսնական թւականների ժամանակական կեանքից:
 3. Վ. Ֆօն Պօլինց—«ԲԻՒՏՆԵՐ ԳԻՇՂԱՑԻՆ», վէպ ժամանակակից գերմանական կեանքից:
 4. Էմիլ Ջօլա—«ԺԵՐՄԻՆԱԼ, Կամ ԱԾԽԱՀԱՏՆԵՐ», վէպ ժամանակակից ֆրանսիական կեանքից:
 5. Հառլայման—«ԴՐԱՄԱՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ» (Կառապան Հենցէլ, Զուլհակներ, Կրամպտօն բարեկամը և այլն).
 6. Վ. է. Թրանցօք.—«ՏԱՐԱՄԱԲԱՐԱԲՈԼԱՄ», —վէպ երեսնական թւականների պօդօլեան ուսումնական կեանքից:

Ամբողջ հրատարակութիւնը կունենայ 2200—2400
մեծադիր երես և կըսկսէի 1905 հոկտ. ու կը
վերջանայ 1906 թ. մայիսին:

330-1

9-28

ՅՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԳԱՅՈՒԹՅԵՐ


ԿԱՊԻՏԱԼ

七

ԿԱՊԻՏՈԼԻՒՄ

Գերդ. Թարգմ. Ս. Թափալիկան

ՀՐԱՏՎԱԿԱԿՈՒՐՔԻՑ
Ս. Լ. Ա. Յ. Յ. Յ. Ե. Ե.
Խ. Բ. Ե. Ե.



14 MAR 2013

22.183

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- I. Կապիտալի ու կառիտալիսմի էռթիւնը:
 - II. Կապիտալի ծագումը:
 - III. Կապիտալիսմի հոգեբանութիւնից:
 - IV. Մարքը՝ կառիտալիսմի տիբապեառութեան տակ:

Ա. ԿԱՊԻՏԱՆԻ ՈՒ ԿԱՊԻՏԱՆԼԻՍՄԻ ԷՌԻԹԻՒՆԸ

Հոսոմէական աշխարհակալութեան կործանւելու
օրերից մինչև մեր ժամանակը, եւրոպական ազգերը
անցել են տնտեսական երեք դարեցը ջաններ՝ գիւղա-
կան-աւտատական, արհեստաւորական և կապիտալիս-
տական։ Տնտեսութեան համապատասխան շրջաններ է
ունեցել և ընդհանուր քաղաքակրթութիւնը, որին ուղ-
ղութիւն տւողը զլիստաւորապէս անտեսութիւնն է եղել։

Առաջին դարեցքանը սկսւեց այն ժամանակ, երբ
գերմանական ազգերը պատմական նշանակութիւն ստա-
ցան. նա գլխաւորապէս երկրագործական կուշ-
տուրայի դրոշմ է կրում: Այդ շրջանում տնտեսական
կեանքի միակ ձգտութիւն է՝ սեփական հողաբաժնից օգտ-
ականից, ձեռք բերել իւր ապրուստը, սեփական աշխա-
տանքով և մասամբ էլ ուրիշների օգնութեամբ: Այդ-
պիսի անտեսութիւնը հնարաւոր էր այն պատճառով,
որ իւրաքանչիւր հողատէր ունէր փոքրաթիւ ստրուկ-
ներ ու ձորտեր, որոնք իրանց ընտանիքների հետ
միասին նրա սեփականութիւնն էին կազմում և առ-
ջովին հլուանապատճեն էին նրան:

3324-84



Տնտեսական երկրորդ դարեցը ջատկանիշն այն է, որ մարդիկ պահպանում են իրանց գոյութիւնը՝ առանց հողային սեփականութիւն ունենալու։ Այդ շըրջանը աննկատելի կերպով ծագում է առաջինից։ Տընտեսական աշխատանքը այլ ևս անմիջական կապ չունի հողի հետ, նաև կին ստրկական յարաբերութիւնն էլ հաց տւողի ու գործաւորի մէջ լուծւած է։ Մեր խօսքը վերաբերում է միջնադարեան բաղաքների արհեստաւորական դարեցը ջանին։ Այս տնտեսութեան նպատակը հետեւալն է՝ ձեռք բերել իւր դասակարգին պատշաճ ապրուստ, մի որևէ արհեստի միջոցով, կամ առասարակ ուրիշների համար աշխատելով։ Մինչդեռ առաջին շրջանում կալւածատէրն էր տնտեսական կարմակերպութեան պարաբերութիւնը, այժմ վարպետն է տնտեսական կազմակերպութեան ներկայացուցիչն ու զեկավարը։ Վարձ ստացող քարկարներն ու աշակերտները բոլորովին ուրիշ յարաբերութիւն ունին դէպի իրանց վարպետները։ Նրանք առաջին շրջանի գիւղական աշխատաւորութների նման ստրուկներ չեն, այլ ազատ մարդիկ են, գոնէ այն մտքով, որ պարտաւոր չեն աշխատել միշտ միննոյն մարդու համար։ Սակայն սրանք էլ մի ուրիշ տեսակ կախում ունին, սրանց յարաբերութիւնն ները որոշած են համբարական խիստ ու ճգրիտ կառնոներով, ուստի աշխատաւորը չէ կարող սրտի ուղած դէպքում, առանց այլ և այլի, առաջարկել իւր ոյժը կամ հտութիւնը ում և ինչ ձեռվ կատենայ, որպէս անում է մեր ժամանակակից բանուրը։

Երրորդ դարեցը այսում է միջին դարեցի սկզբներից, իսկ մեր ժամանակում արդէն իւր գաղաթնակէտին է հասել, նա կարող է կոչւել՝ զուտ առևտրական—շահագիտական տնտեսութեան շրջան։

Այստեղ արդէն տնտեսութեան անմիջական նպատակը փող ձեռք բերելի է։ Որպէսզի այդ, կապատկասական անսահմած, տնտեսութիւնը հնարաւոր լինի, անհրաժեշտ է երկու բան՝ մի կողմից աշխատանքը պիտի բոլոր տեսակէտներից միանգամայն ազատ լինի, իսկ միւս կողմից անհրաժեշտ է, որ նիւթական միջոցները և բանւորական ոյժը միւնոյն ձեռքի տակ կինարօնացած լինին։ Տնտեսական իւրաքանչյուր կազմակերպութիւն որոշ չում է և այն բանով, թէ իսկապէս ուր է ձգտում նա, ինչու համար է պատրաստում այս ու այն առարկան։ Ի հարկէ, ամեն բան պատրաստում են այն նպատակով, որ յետոյ գործադրեն ու սպառեն, եթէ ոչ առարկան ինքն իրան ոչ մի նշանակութիւն չունի։ Գուցէ միայն գեղարվեստի ասպարիզում կարող է խօսք լինել այնպիսի առարկաների մասին, որոնց նպատակը նէնց իրանց գոյութիւնն է։ Նկարը կամ պատկերը սպառելու համար չէ, այլ ունի մի զաղափարական նպատակ՝ հոգեկան բաւականութիւն պատճառել մարդկանց և բարի օրինակ տալ։ Ուրիշ բան է սպառուական մթերքների կամ առարկաների արդիւնագործութիւնը։ Այստեղ առարկան պատրաստում են, որպէսզի յետոյ սպառեն, թէ չէ նա ինքն ըստ ինքեան ոչ մի արժէք չունի։ Հարցը միայն այն է, թէ ով է առարկան սպառելու կամ գործադրելու։ Ընտանեկան սահմանափակ տնտեսութեան մէջ (ինչպէս տնտեսական առաջին շրջանում) պատրաստում են շորեր, կօշիկներ ու բազմատեսակ ուրիշ առարկաներ՝ բոլորն էլ սեփական գործածութեան համար, իսկ մի կապիտալիստական գործարանում այս ու այն առարկաները պատրաստում են բոլորովին ուրիշ նպատակով։ Այդ ապրանքները չէ սպառելու ոչ գործութանատէրը իւր ընտանիքի հետ

միասին և ոչ էլ նըա բանւորները: Այստեղ ապրանքը պատրաստում են՝ ուրիշներին վաճառելու եւ շահ ստանալու նպատակով: Այդ տեսակէտից, նշանակութիւն չունի այն հանգամանքը, թէ ինչ ձեռվ են գործում՝ ձեռքով թէ մերենայով, անհատակմն ոյժերով է գործը կատարում, թէ խմբական աշխատութեամբ: Ուրեմն տնտեսական գործունէութիւնը, սպառելու տեսակէտից կարող է միայն երկու նպատակներից մէկին ծառայել: Կատարելով որևէ տնտեսական գործ, մենք կամ պատրաստում ենք այնպիսի բարիքներ, որոնք հարկաւոր են մեր սեփական գործածութեան համար, կամ թէ մեր պատրաստած իրերը ուրիշներն են գործ ածելու, իսկ մենք մի որոշ շահ ենք ստանալու: Ուրիշ խօսքով ասած՝ տնտեսութեան նպատակը կամ սեփական պահանջի անմիջական լրացումն է, կամ թէ շահ ստանալն է: Եւրոպական ազգերի անտեսական զարգացման առաջին շրջանը — գիւղական-աւատականը — զեկվագրում էր սեփական պահանջի լրացման սկզբունքով: Երկրորդ շրջանում, ուր զլխաւոր դերը արհեստն էր խաղում, պահանջի լրացման սկզբունքը հետ զուգընթաց, նկատում էր և շահ ստանալու սկզբունքը: Իսկ երրորդ՝ կապիտալիստական — շրջանում, արդէն տնտեսական կեանքին ամբողջովին տիրապետում է շահագիտական սկզբունքը:

Անա այդ երրորդ շրջանն է կազմում մեր զբոյշի նիւթը: Մենք պիտի պարզաբաննենք այն հարցը, թէ ինչ է իսկապէս կապիտալը և ինչպէս է նա առաջ եկել, ինչի՞ մէջ է կայանում կապիտալիսմի էութիւնը, որպէսզի յետոյ կարողանանք ըմբռնել, թէ ինչպէս է կապիտալիսմը հիմնովին յեղաշրջել անտեսական կեանքը, փոխել մարդու մտածողութեան եղանակը և որոշել անհատի դիրքը հասարակութեան մէջ:

Կապիտալը տնտեսական գործօններից մէկն է: Նա վաղուց գոյութիւն ունի. գուցէ սկիզբ է առել նա քաղաքակրթութեան ամենանախնական շրջանում: Բայց կապիտալը իւր այժմեան նշանակութեամբ էապէս տարբերում է նախկին՝ առևտրական ու վաշխառուական գրամագլուխներից: Վերջիններս, ի հարկէ, նոյնպէս որոշ արժէք էին պարունակում իրանց մէջ, ինչպէս և առաջինը, նոյնպէս շահ էին բերում և իրանք իրանց աճում էին, սակայն նրանց աճեցողութիւնը կատարում էր ուրիշների հաշւին, շատ թէ բիչ աչքի ընկնող կեղեգմամբ: Իսկ նորագոյն կապիտալը, ընդհակառակը՝ շահ է բերում, հաւասար արժէքները իրար հետ փոխանակելու միջոցով: Այդ շահեցումը տեղի է ունենում երկու առանձին փոխանակութիւնների մէջ գոտնուղ ժամանակամիջոցում: Որպէսզի կապիտալը կարողանար ձեռք բերել իւր այժմեան յատկութիւնը, անհրաժեշտ էր, որ անտեսական կեանքը հիմնովին կերպարանափոխէր, և զործատիրոջ ու զործաւորի յարարերութիւնները հիմնական ձևակերպութեան ենթարկեին: Ոչպակաս պիտի փոխւէին արդիւնագործողի ու սպառողի յարարերութիւնները:

Թէ ինչ է կապիտալը և ինչ պէտք է հասկանալ կապիտալիսմ ասելով, այդ մասին շատ կարծիքներ են յայտնւել, որոնք մեծ մասամբ իրար բոլորովին հակառակ են եղել: Աւելի հին անտեսագէտների կարծիքով, կապիտալը այն արժէքն է, որը գոյացել է նախապէս գործադրուած աշխատանքի միջոցով, ուրեմն կապիտալը ուրիշ մի բան չէ, բայց եթէ մարմնացած աշխատանք, կամ զործադրուած աշխատանքի կուտակումը, կինտրօնացումը: Աշխատանքի այդ կոյտը կարող է հարկաւոր դէպում զանազան նոր արժէքներ հայթայթել, ար-

գիւնք բերել, միայն թէ, և հարկէ, յիշեալ կոյտը վեր-
լուծելու համար անհրաժեշտ է անսփառական որոշ գոր-
ծունէութիւն: Տնտեսազէտ Բաստիատի կարծիքով, կա-
պիտաւը բաղկացած է երեք առանձին տարրերից՝ ար-
դիւնագործութեան համար պիտանի նիւթերից, ան-
հրաժեշտ գործիքներից, և այն սպառողական պաշարից,
որը գործադրում են բանւորները գործի ընթացքում:
Բայց այդ որոշումը աչքի առաջ ունի միայն կապի-
տալի արտաքին յատկութիւնները, իսկ նրա ներքին
էութեան մասին ոչինչ գաղափար չէ տալիս: Ենթա-
գրենք, որ մենք ձեռքի տակ ունինք յիշեալ երեք տար-
րերը, այսինքն՝ նիւթեր, գործիքներ ու պաշար: Այնու-
ամենայնիւ սրանցով մենք չենք կարող գործ առաջա-
ցնել, արդիւնք բերել, շահ ստանալ, եթէ միաժամանակ
ձեռքի տակ չունենանք անհրաժեշտ մարդկային ոյժը՝
ստրուկներ կամ վարձկան բանւորներ: Հոռմէական մե-
ծածաւալ կալւածաէրերը և միջնագարեան աւատա-
կան առաքեները ձեռքի տակ ունեին աշխատաւորների
ամբողջ բանակներ՝ կազմած կամ ստրուկներից, կամ
թէ մշտնջենաւոր հպատակներից, որոնք նրանց համար
աշխատում էին, առանց համապատասխան վարձա-
տրութիւն ստանալու: Հողի հետ կապւած աշխատաւոր
բանակը կալւածատիրոջ կապիտալի մի մասն էր կազ-
մում, ինչպէս և նրա անսառնները: Ուրեմն նախկին
կապիտալ եավես տարբերում եր այժմեան կապիտալից
երանով, որ այն ժամանակ հողերի մեակութեան կամ
հում եիրերի շահագործութեան հանուան աներաժեշտ մարդ-
կային ոյժի—նորախրոց անձնական սեփականութիւնն
եւ: Հում նիւթը, գործիքներն ու պաշարը միասին
առած, չին կարող ժամանակակից կապիտալի նշանա-
կաւթիւնն ունենալ, քանի դեռ աշխատանքը ազատ

չէր: Նախ ոկիտի աշխատաւորի գիրը փոխւէր, աշխա-
տաւորը ինքը իւր ոյժի տէրը գանալով, իրաւունը
ունենար վաճառելու իւր ոյժը կամ ընդունակութիւնը,
որպէսզի հում նիւթ, գործիք ու պաշար կամ զրամ
ունեցողը կարողանար իւր ստացւածքը շահագործել:

Այդպիսով է ահա կապիտալը ստացել իւր ժա-
մանակակից նշանակութիւնը, որ արտայայտում է կարլ
Մարկուլ հետեւեալ կերպով. «Կապիտալը ժամանակա-
կից իմաստով միայն այն ստացւածքն է, որը սեփա-
կանատէրը գործադրում է՝ բանւորական ոյժ կոչւած
ապրանքը արժէքաւոր գարձնելու համար. կապիտա-
լիստը գնում է բանւորական ոյժ կոչւած ապրանքը,
վճարելով նրա տուկայական ամբողջ գինը, իսկ յետոյ
գործադրելով իւր գնած ոյժը, առաջ է բերում ար-
դիւնարերած ապրանքի մէջ մի աւելորդ արժէք՝ որ և
սեփականացնում է իրան: Ուրեմն կապիտալը ինքն իրան
բազմապատկան բնաւորութիւն ունի. նա ներկայացնում է
մի այնպիսի արժեք, որը ինքն իրան անում ու աւելի ար-
ժեկաւոր է դառնուած:

Այն ժամանակից սկսած, որ բանւորական ոյժը
անկախ զրութիւն ստանալով, դարձել է մի ապրանք,
որը կարելի է միշտ, հարկաւոր քանակութեամբ ձեռք
բերել, կապիտալիստական ձեռնարկութիւնն էլ զար-
ձել է հասարաւոր ու շահարեր: Զեռնարկուն փողով
գնում է բանւորական ոյժ կոչւած ապրանքը, որքան
հարկաւոր է իւր տնտեսական նպատակի համար: Հէնց
որ ձեռնարկութեան նպատակը իրազործւած է, ձեռ-
նարկուի ու բանւորի յարաբերութիւնը լուծում է.
Նրանք այլևս ոչինչ կախում չունեն իրարից: Այդպի-
սով, ձեռնարկուն ու բանւորը գտնում են ապրանք
(ոյժ) վաճառողի ու գնողի յարաբերութեան մէջ: Ուստի

ամենափոքր կապիտալն անգամ կարելի է այս ու այն կերպով գործի զնել և շահ ստանալ: Նախակապիտալիստական ժամանակներում, նիւթական միջոցներ կամ դրամ ունեցողը կարող էր իւր ստացւածքը շահագործել միմիայն առուտուրի կամ վաշխառութեան միջոցով, բայց չէր կարող գառնալ կապիտալիստ—արդիւնագործ, որովհետև շուկայում չէր ծախւում բանւորական ոյժը, այսինքն բանւորը, այժմեան մտքով, գոյութիւն չուներ:

Այժմ, երբ արդէն մեզ համար պարզեց կապիտալի ինքն իրանից արժէք առաջ բերող բնաւորութիւնը, զժւար չի լինի հասկանալ կապիտալիստական տնտեսութեան կամ, ուրիշ խօսքով ասած, կապիտալիստի էութիւնը: Կապիտալիստ ասելով, ըստ Զօմբարտի, հասկացւում է այն տնտեսական ձեր, որի նպատակն է՝ շահեցնել մի նիւթական ստացւածք, այսինքն նրան գործի զնել ձեռնառ կերպով, այս դէպքում կապիտալը հնիթարկւում է մի շարք կերպարանափոխութիւնների, նրան զործագրում են, վարձարելով բանւորին՝ մերթ այս ու մերթ այն ծառայութեան համար: Այդ ձեռվ ահա, նիւթական ստացւածքը դառնում է տնտեսական գործունէութեան կենտրօնական ոյժը, և կապիտալիստական ձեռնարկութիւնը ներկայացնում է շահագիտական տնտեսութեան ամենակատարելագործութեան ամենա ամառածածութեան մեջ: Զօմբարտը հետեւեալ կերպով է որոշում սեփականատիրոջ դիրքը կապիտալիստական տնտեսութեան մէջ: «Բանի որ կապիտալիստ—ձեռնարկուն, այսպէս ասած, իւր ստացւածքի ներկայացւցիչն է միայն, նրա անձնաւորութիւնը նշանակութիւն չունի բուն տնտեսութեան համար, մի ուրիշը կարող է նրան փոխարինել: Կապիտալիստական ձեռնարկութեան շըրշանակի մէջ կատարւող գործունէութեան կեանք տւողը

կապիտալիստի անձնական արժանաւորութիւնը չէ, այժուրիշ մարդկանց ոյժերն ու ընդունակութիւնները, ուրոնք արծածւում են և երեան են գալիս՝ ստացւածքի գործադրութեան շնորհիւ: Ահա թէ որտեղից է ծագում այն ահազին զօրութիւնը, որ ցոյց է տալիս իւրաքանչիւր կապիտալիստական տնտեսութիւն: Կապիտալիստական ձեռնարկութի գործունէութիւնը զուտ մտաւոր ու բանական է, հակառակ միջնագարեան արձեւութաւրին, որը ինքն էր իրօք գործողը մի անկիւնում սահմանափակւած: Եթէ գեղարւեստական կամ գիտնական իւրաքանչիւր ձեռնարկութիւն մի տեսակ մէնակութիւն է պահանջում, մի տեսակ խոյս է տալիս աշխարհից, սրանց հակառակ՝ կապիտալիստական տնտեսութիւնը բոնում է ուղղակի աղմկալից կեանքի կենտրօնը, մէնակութեան մէջ կընկճէր կապիտալիստ—ձեռնարկուն: Քանի որ նրա գործի յաջողութիւնը ամբողջին կախւած է այն հանգամանքից, թէ որքան կը տարածւեն արդիւնարեած ապրանքները, ապա նաև իփիտի շարունակ ձգտէ, ըստ կարելոյն նորանոր վաճառանցներ գտնել կամ ստեղծել՝ իւր ապրանքը փողի վերածելու համար:

Եւ այդպէս, կապիտալիստական տնտեսութեան համար անհրաժեշտ են երկու կարգի պայմաններ՝ անձնական ու առարկայական, կամ սուրբեկալի և օրիեկտիւ: Նախ և առաջ հարկաւոր է, որ առանձին անհատների ձեռքի տակ դիզւած լինի որոշ քանակութեամբ փող կամ որևէ ուրիշ տեսակի գումար: Սակայն այդ գեռ բաւական չէր լինիւ, եթէ գոյութիւն չունենար երկրորդ պայմանը, այսինքն եթէ գումարատերը գուրիկ լինէր կապիտալիստական ոգուց: Որովհետև ոսկու կամ արծաթի այս ու այն բանակութիւնը ինքն ըստ

քեան ոչ մի արժեք չէր ունենալ, եթէ սեփականատէրը ոչ ինքը շահեցնէր նրան և ոչ էլ մի ուրիշին յանձնէր՝ շահեցնելու համար: Որպէս առարկայական—օբյեկտիւ—պայմաններ համարում են այն հանգամանքները, ուրոնք թոյլ են տալիս գումարատիրոջ՝ որոշ յարաբերութիւններ ունենալ կողմանի անձանց հետ: Այստեղ առաջին տեղը բուռում է, ինչպէս արդէն ցոյց ենք տեև, բանուրի ազատութիւնը, ըստ որում կարելի է լինում՝ աշխատաւորի ոյժը գնել շուկայում, ինչպէս ամեն մի ապրանք:

Կապիտալիստական ձեռնարկութիւնը, շահադիտական անտեսութեան կատարելագործւած տիպարը լինելով, հիմնովին փոխել է արդիւնագործութեան գաղափարն ու նպատակը: Տնային—ինքնապառողական տնտեսութեան մէջ (գիւղական—աւատական շրջանում), նոյն իսկ բաւական զարգացած աստիճանի վրայ, այս ու այն ապրանքը պատրաստում են այն նպատակով, որ ուղղակի իրանք գործադրեն, կամ թէ նրա միջացով ձեռք բերեն իրանց հարկաւոր մի ուրիշ ապրանք: Այս դէպքում, եթէ նոյն իսկ փողն էլ դեր է խաղում, նա լոկ մի արժեչափ է—փողով չափում են իրար հետ փոխանակող ապրանքների արժեքը: Այդ փոխանակութիւնը կարելի է որոշել հետեւալ բանաձեռով՝ առանձիւ—փող—ապրանք: Ուրիշ բան է կապիտալիսմը: Այստեղ փողը այլ ևս լոկ արժեչափ չէ, այլ նաև ինքն էլ մի իրական արժեք է ներկայացնում, որի միջոցով կարելի է առաջ բերել նոր արժեքներ: Այժմ փողը կապիտալի մի մասնաւոր տեսակն է, որովհետեւ կապիտալը իւր շահեցման ընթացքում մի շարք ձեռակերպութիւնների է հնթարկում, ըստ որում միշտ ուղղում փողի կերպարանք է ունենում և վերջի վերջոյ

դարձեալ փող է դառնում: Կապիտալիստական արդիւնագործութեան ու փոխանակութեան բանաձեռ հետեւալն է՝ փող—ապրանք—փող: Փողը այստեղ այն միջոցն է, որով ձեռնարկուն օգնում է նիւթական ու անձնաւորական պիտոյքները (հում նիւթ—աշխատաւորի ոյժը), որոնք անճրածեալ են արդիւնագործութեան համար: Կապիտալի այն մասը, որ գործադրւում է նիւթական պիտոյքները ձեռք բերելու համար, կոչը ունել է հաստատուն կամ անփոփոխ կապիտալ: Իսկ այն մասը, որով գնում են աշխատաւոր ոյժը, կոչը ունել է փոփոխական կապիտալ: Տեսնենք, թէ ինչ նշանակութիւն ունեն այդ մասնաւոր ածականները: Կապիտալի այն մասը, որով ձեռք են բերւած արդիւնագործութեան համար հարկաւոր նիւթերը, անփոփոխ է մնում արդիւնաբերւած ապրանքի արժեքի մէջ: Իսկ արդիւնաբերւած ապրանքի աւելացած արժեքը գործադրւած աշխատանքի արդիւնքն է: Ուրեմն այն կապիտալը, որով գնում է աշխատաւորի ոյժը, արդիւնագործութեան մէջ նոյնը չէ մնում, այլ աճում է, ուստի և կոչը ունել է փոփոխական, մինչդեռ նիւթերի համար գործադրւած կապիտալը հաստատուն է մնում (անփոփոխ):

Մարկսի կարծիքով, արդիւնագործութեան մէջ շահ առաջացնողը բացառապէս այդ փոփոխական կապիտալն է: Քաղաքատնտեսական գիտութեան նախահայր Ադամ Ռմիթը նոյն միտքն էր յայտնում տակաւին 1770 թւին, իւր «Ազգերի հարստութիւն» աշխատութեան մէջ: «Իւրաքանչիւր արդիւնաբերւած առարկայի մէջ—ասում է նա—պարունակւած է որոշ քանակութեան աշխատանքի արժեքը, որով մենք ձեռք ենք բերում մի ուրիշ առարկայ, որը ներկայ բոլեքին պարունակում է իւր մէջ հաւասար քանակութեամբ մի աշխատանքի

արժէքը։ Աշխատանքը այն առաջին դինը կամ նախնական փողն է, որով գնուում է ամեն մի բան։ Ըստ Կարլ Մարկսի արժէքի տեսութեան, իւրաքանչիւր ապրանքի արժէքը չափում է այն ընդհանուր—մարդկային, հոսարակօրէն—անհրաժեշտ (այսինքն միջին, սովորական) աշխատանքով, որը գործազրւած է յիշեալ ապրանքը պատրաստելու համար, և այդ աշխատանքը չափում է գործ գրած ժամանակի տեղութեամբ։

Բայց պէտք է ուշադրութիւն դարձնել ու այն հանգամանքի վրա, որ աշխատանքի յարաբերական արդիւնաւէտութիւնը կարող է բաւականաչափ աւելանալ՝ վաճառականի միջամտութեամբ։ Քաղաքատնտեսական տեսակէտից նայելով, կապիտալիստական ձեռնարկութ կարգադրիչ գործունէութիւնը նոյնչափ, որոշ հանգամանքներում նոյն իսկ աւելի, նպաստում է արժէք առաջ բերելու գործողութեան, որչափ և տեխնիկական աշխատանքը։ Այժմ հարց է ծագում, թէ արգեօք ձեռնարկութին բաժին ընկնող շահը ո՞րքան է համապատասխանում նրա գործ գրած կարգադրիչ—հաշւարարական աշխատանքին։ Բայց այդպիսով մեզ համար ծագում է մի նոր խնդիր՝ ընդհանրապէս մարդկային աշխատանքի զնահատութեան խնդիրը։ Զուտ տնտեսական տեսակէտից նայելով, ամբողջ հասարակութիւնը ապրում է աղջաբնակութեան մի մասի աշխատանքի արգասիրով, թէ իշխանաւորը և թէ գիտնականը, թէ դրամատիկական բանաստեղծը և թէ փողոցային նւագածուն ու մուրացկանը, օպերայի առաջին երգչուերն, ինչպէս և պալատական աստիճանաւորը կամ փողոցային կինը—սրանք ամենը էլ ապրում են տեխնիկական բանաւորի աշխատանքի արգասիրով։ Խնդրի վրա այդպէս նայելով, սօդիալիստը պնդում է, թէ տեխնի-

կական բանւորը իրաւունք ունի իւրացնելու աշխատանքի ամբողջ արդիւնքը։ Բայց որովհետեւ, լայն մըտքով առած, տնտեսական աշխատանքի զանազան տեսակները սերտ կերպով շաղկապւած են իրար հետ և կապիտալիստական տնտեսութիւնը շատ բարդ երևոյթ է, ուստի անհնար է թւերով սրոշել իւրաքանչիւր մասնակցողի գործ գրած աշխատանքի չափը։ Բայց այդ, պէտք է ի նկատի ունենալ, որ շատ մարդիկ, որոնք չեն պատկանում արդիւնագործող գասակարգին, օրինակ՝ գիտնականը, ինժեները և սրանց նմանները, նորանոր գիւտերով ու հնարքներով, արդիւնագործական պարագաները բարուքելով, բարձրացնում են տեխնիկական աշխատանքի արդիւնաւէտութեան աստիճանը։

Մենք տեսնում ենք ուրեմն, որ արդիւնարեր աշխատաւորները լինում են երկու տեսակ՝ տեխնիկական ու մտաւոր։ Սրանց թւեն չէ վերաբերում հասարակական «պարագիտների» ամբողջ բանակը, որին պատկանում են գումարի շահով ապրողները, արժենումսերի կտրոններ ծախսողները, անառակ կանայք և այլն, որոնք իւրացնում են տեխնիկական աշխատաւորների աւելացրած արգիւնքը։ Սօցիալիստները յիշեալ ձրիակերների շարքն են դասում և բոլոր միջնորդ վաճառականներին։ Ահա թէ ինչ է ասում Բէրէլը վերջիններիս մասին։ «Միջնորդ անձնաւորութիւնների օրէցօր աճող բազմութիւնը մի կատարեալ չարիք է։ Այդ մարդկիկ շարունակ չարչարւում են և աշխատանք են գործ գնում, սակայն նրանց գործունէութիւնը միանգամայն ապարգիւն է։ բազմաթիւ անհատներից բազկացած այդ գասակարգը, իր բոլոր խաւերով հանդերձ, ներկայացնում է ձրիակերների մի բանակ»։ Նոյնքան խիստ

կերպով յարձակւում է այդ «պարագիտների» վրա Մարկով. «Բարձր և ստոր աշխատանքների մէջ առար-
բերութիւն դնելը անհիմն երևակայութեան արդիւնք
է. գոնէ իրական զանազանութիւնը վաղուց անհետա-
ցել է և միայն աւանդութեան ազգեցութեան տակ են
մարդիկ խօսում զուտ մտաւոր և զուտ տեխնիկական
աշխատանքների գոյութեան մասին։ Յամենայն դէպս
չը պէտք է կարծել, որ այդպէս կոչւած բարձր աշխա-
տանքը քանակօրէն մեծ տեղ է բանում հանրական աշ-
խատանքի մէջ։ Աչնդը հաշւում է, որ Անգլիայում, ուր
Նրա օրերում միայն 18 միլիոն ժողովուրդ կար, տաս-
նուումէկ միլիոնը հասարակ աշխատանքով էր ապրում։
Ազգարնակութեան ընդհանուր թւից զուրս գալով մի
միլիոն արիստօկրատաներին, երկու միլիոն կատարելա-
պէս չքաւորներին, թափառաշրջիկներին, յանցաւոր-
ներին, անառակ կանանց և սրանց նմաններին, կը մնայ
միայն 4 միլիոն միջին դասակարգին պատկանող, որի
մէջն են նոյնպէս պաշտօնեաները, գրականագէտները,
արևեստագէտները, ուսուցիչները և այն։»

Այդ երկու հատւածներից և վերը առւածներից
ընթերցողը կը տեսնէ, որ արդիւնաւոր և ապարդիւն
աշխատանքների մէջ եղած սահմանը խիստ անորոշ է։
Որոշ չեն նոյնպէս արժեքի ու շահի յարաբերութիւն-
ները։ Այստեղ ամեն բան կախւած է անտեսագէտ-
ըննազատի անձնական հայեցողութիւնից։ Սակայն մեր
նպատակի համար առանձին նշանակութիւն չունի ար-
ժեքի տեսութեան մասին ծագած վէճը, նոյնպէս այն
հարցը, թէ ինչ շահ է ստանում ձեւնարկուն, կամ ինչ
պէս է բաժանում աւելացած արդիւնքը։ Մեզ համար
կարենք է միայն այն անհերքելի փաստը, որ կապի-
տալիսմի ստեղծած յարաբերութեան շնորհիւ, կապի-

տալիսր կարողանում է իրացնել ուրիշի աշխատանքի
արդիւնքը. միևնոյն է թէ ինչ միջոցով է նա հասնում
իր նպատակին՝ բանւորական ոյժ կոչւած ապրանքը
անձամբ շահագործելով, թէ իր կապիտալը ուրիշնե-
րին պարագ տալով։ Կապիտալիսմը շարունակ ստեղ-
ծում է նորանոր եղանակներ, որոնցից օգտւելով մարդ-
կանց այս կամ այն փոքրիկ խումբը կարողանում է գէ-
պի իրան քաշել ուրիշների աշխատանքի շնորհիւ
աւելացած արդիւնքը։ Նսիր կապիտալիսմի հարազա-
գաւակն է։

Արդիւնագործութիւնը, փոխելով իր նախկին
նպատակը, այսինքն դէպի շահը ձգտելով, ոչ միայն
կերպարանափոխել է ընդհանուր տնտեսական կեանքը,
այլ մեծ ազգեցութիւն է արել նոյն իսկ մտաւոր կեան-
քի վրա և ժամանակակից մարդուն մի նոր բնաւորու-
թիւն է տեկլ։ Եթէ այդ բանին հետամուտ լինենք, կը
տեսնենք, որ բոլոր այն գործօնները, որոնք սովորա-
բար քաղաքակրթութիւնը առաջ մղող ոյժեր են հա-
մարւում, ինչպէս օրինակ, կրօնական ու քաղաքական
գաղափարները, էապէս ոչ մի նշանակութիւն չունեն,
այլ շատ-շատ միմիայն անցողական երևոյթներ են ներ-
կայացնում։ Նախկին ժամանակներում, երբ շահագի-
տական տնտեսութիւնը գեռ ընդհանրացած չէր, թերեւ
այդպէս կոչւած «անկշռելի» ոյժերը աչքի ընկնող գեր
են խաղացել, իսկ այժմ թէ անհատի և թէ ամրող
ազգերի կեանքին ուղղութիւն տւողը տիրապետող
տնտեսական սկզբունքն է։



Ա. ԿԱՊԻՏԱԼԻ ԾԱԳՈՒՄԸ

Որպէսզի կարողանանք որոշել, թէ ինչ ազդեցութիւն է արել ժամանակակից կապիտալիսմը քաղաքացին կրթութեան զարգացման վրա, նախ պիտի տեսնենք թէ ինչպէս է ծագել կապիտալը, այսինքն թէ ինչպէս է նա գոյացել նախկին ժամանակներում: Ազգերի գաղթականութիւնների փոթորկալի դարեցջանից յետոյն երբ արդէն բարբարուները կողոպտել էին հոռմէական պետութեան մէջ կուտակւած գանձերը և ցանք ու ցրի էին արել ամբողջ աշխարհի երեսին, ազգաբնակութիւնը նորից սկսեց մշակել եւրոպայի հին ու նոր հոգերը, նախկին տնտեսական աննպաստ յարաբերութեամբ, հազար ու մի տաննջանքներով հողը մշակել որպէսզի մի չնչին բերք ստանար, որով հազիւ է պահպանում իր թշւառ գոյութիւնը: Խոկ կապիտուգոյացնելը ժամանակակից իմաստով, կամ հարստութիւն դիզելը կատարելապէս անհնար էր մինչև խաչ կիրարի պատերազմները: Միայն երբ եւրոպայի կ սարարբարոս ազգաբնակութիւնը շփւեց արևելքի հարուստ ու քաղաքակիրթ ժողովուրդների հետ, եւրոպացիք զգացին շքեղ կեանքի ճաշակը, ու նրանց պիհնները շատացան: Այլիս սեփական հողաբաժն մշակութիւնը չէր կարող բաւարարութիւն տալ եւրոպացուն նոր պահանջներին: Հէսց այս պատճառով նըոպան այնուհետեւ պիտի արևելքի հետ մշտառեւ յըաբերութեան մէջ լինէր, միայն թէ ոչ պատերազմ կան, այլ խաղաղ—կուլտուրական ու տնտեսական յ

քարերութեան մէջ: Եւ խսկապէս, խաչակրաց պատերազմների ժամանակ իտուլիկայում առաջ եկան մի շարք, հանրապետական կազմակերպութիւն ունեցող, հզօր քաղաքներ, որոնք օգտւելով պատերազմական խառնաշխիութիւններից, առևտրական ահազին շահեր ստացան:

Ապրանքների փոխարկութիւնը (առևտուրը) և նոր զարթնած շահասիրութիւնը նպաստաւոր ազդեցութիւն արին արհեստաների վրա և ահա շուտով գիւղական-աւատաշական տնտեսութեան շուրջը առաջ է գալիս մինոր ոյժ համբարական սկզբունքներով կազմակերպւած արհեստաւորների դասակարգը, մեր ժամանակակից բուրժուազիայի նախատիպը: Արհեստանոցը նախապատրաստեց կապիտալիստական ձեռնարկութեան համար անհրաժեշտ պայմանները և ճանապարհ հարթեց կապիտալի համար: Բայց նա նպաստեց նոյնպէս գոյգերի կուտակւելուն (անհատական հարստութեան), գոնէ անուղղակի կերպով: առևտրականը իր փողով գնում էր արհեստաւորի պատրաստած ապրանքի մի մասը և ծախելով, ինքն էլ շահ էր ստանում: Գերմանական արհեստաւորի պատրաստած ապրանքները միշտ ին դարեցում գնում էին մինչև Հիւսիսային ծովի ափերը և աւելի հետու Սրա չսորենիւ էր, որ նիւրընքերգ և Առևտրուրգ քաղաքները նշանաւոր առևտրական կենտրոններ դարձան, և նրանց բնակիչները մեծ հարստութիւն դիզեցին:

Սակայն բուն կապիտալի գոյանալուն շատ չէ նպաստել քաղաքային արհեստաւորական կուլտուրան, համեմատելով տնտեսական ուրիշ գործոնների հետ: Ամենամեծ գումարները յաճախ գոյացել են տնտեսական ասպարիզից բուրս գտնւած հանգամանքների շնոր-

հիւ, թէն ըստ երևոյթին գոյքերի կուտակման անմիշական ու բնական պատճառը առեւտուրն է:

Գոյքերի կուտակման ամենից շատ նպաստել է այն հանգամանքը, որ յաճախ հարստութիւնը մէկ սեփականատիրոջից մի ուրիշի ձեռքն է անցել: Ուշադրութեան արժանի է այն հանգամանքը, որ այս բանի մէջ գլխաւոր դերը եկեղեցին է խաղացել: Ամբողջ աշխարհի քրիստոնեայ պատարնակութեան գանձերը, արդէն իններորդ գարից սկսած, եկեղեցական գանձանակի անոնով, հզում էին դէպի Հռոմ, իսկ 13-դ դարում եկեղեցական ֆինանսների կառավարութիւնը արդէն ներկայացնում էր մի փառահեղ կազմակերպութիւն: Պատական գանձավարութեան պատմական մեծ նշանակութիւն էր տալիս այն հանգամանքը, որ եկեղեցական վարչութեան գրդումներով շատերը կտակում էին իրանց ամբողջ հարստութիւնը եկեղեցուն: Թէն միշտն դարերի սկզբում զուտ փողի (գրամի) քանակութիւնը թիւ էր, և առկտուրը կատարում էր գլխաւորապէս բերքերի փոխանակութեան ձեռվ, այնուամենայնիւ վանքերին ու եկեղեցիներին տուրք տառիները մեծ մասամբ փողով էին վճարում: Ամենամեծ փողերը ստացել է եկեղեցին խաչակրաց արշաւանքների տասանորդի անոնով, որը եկեղեցին դեռ 12-դ դարից սկսած շարունակ հաւաքում էր, բայց սակաւ էր գործադրում իսկական նպատակի համար:

Միջին դարերի ընթացքում պատերը և հոգեոր անպետական միաբանութիւնները մեծամեծ հարստութիւններ ունեին ձեռքի տակ: Աշխարհական ոչ մի հիմնարկութիւն չէր կարող հարստութեան տեսակէտից եկեղեցու հետ համեմատել, բայց ֆրանսիական ու անգլիական թագավորներից անոնով, որը կարող էր լին լինում, վերջը անհուն հարստութեան էր էին դառնում, որովհետև ժողովրդի վճարած փողերը, փոխանակ պետական գանձարան մտնելու, իչև անապարհին իջևանում էին բարձրապատիւ վերակառների գրպանում: Բայց փող դիղելու այդ խորհրդաոր միջոցը ժամանակի ընթացքում հետզհետէ անհետնում էր, որովհետև գանձավարական գործը աճելով բարդանալով, աւելի ու աւելի դժւարանում էր, և դնւածնունդ բարօնների ու լորդերի գործ դրած շաշտատանքը անբաւարար էր դառնում, ուստի և գործերը յանձնուում էին աւելի մասնագէտ ու վարժած ժերին: Այդպիսով առաջ եկաւ մի նոր դասակարգ, անգլիական թագավորներից և Վենետիկի ու Միլանի

հանրապետութիւններից: Եւրոպական ազգերը պարզամտութեամբ շարունակ փող էին տալիս, առանց հարցնելու, թէ ուր են գնում իրանց փողերը: Ժողովրդական աշխատանքի գլխաւոր արդիւնքը եկեղեցական լումայի անունով հոսում էր դէպի Հռոմ, եթէ միայն տեղական կղերը աւելի բարւոք չէր համարում՝ տեղնու տեղը մաքրագարդել ձեռք ընկածը:

Հարստութեան գումարման այդ տեսակ միջնորդի շարքում պէտք է դպի նոյնպէս այն փողերը, որ վճարում էր ժողովրդը ճամատուցւած ծառայութեանց» (փէշքէչների): Համար: Այս դէպօւմ փողերը կուտակում էին բարձրագոյն պետական պաշտօնեաների ձեռքում: Սրանք են ամենաերկելի թըղթախաղացները, որոնց սակայն կախաղան չեն բարձրացնում: Բազմաթիւ հարկառուներ, գանձարանների լերատեսուչներ, մինիստրներ ու կանցլերներ, որոնք կըրում, պաշտօնի մտնելիս՝ խզուկ ու թշւառ արածներ էին լինում, վերջը անհուն հարստութեան էր էին դառնում, որովհետև ժողովրդի վճարած փողերը, փոխանակ պետական գանձարան մտնելու, իչև անապարհին իջևանում էին բարձրապատիւ վերակառների գրպանում: Բայց փող դիղելու այդ խորհրդաոր միջոցը ժամանակի ընթացքում հետզհետէ անհետնում էր, որովհետև գանձավարական գործը աճելով բարդանալով, աւելի ու աւելի դժւարանում էր, և դնւածնունդ բարօնների ու լորդերի գործ դրած շաշտատանքը անբաւարար էր դառնում, ուստի և գործերը յանձնուում էին աւելի մասնագէտ ու վարժած ժերին: Այդպիսով առաջ եկաւ մի նոր դասակարգ, անգլիական թագավորներից և Վենետիկի ու Միլանի

վաճառողները, նորագոյն բուրժուազիայի արժանաւոր
նախամայրերը: Աւատական իշխանների գինանասական
գործերը, անցնելով հասարակ քաղաքացիների ձեռքը,
բաւական նպաստեցին վերջիններիս դրութեան բար-
երւելուուն:

ինչպէս պետական ասպարիզում, այնպէս էլ հաս
սարակական կեանքի մէջ, փոքրաթիւ անհատները կա-
րողանում են այս ու այն միջոցով գումարներ լիդեր
Քաղաքնացիական կեանքի մէջ այդ նպատակին մասնա-
ւանդ ծառայում էր փոխատութեան միջոցը: Վաշինո-
ուութեան պատմական նշանակութիւնը պէտք է որոնե-
այն բանի մէջ, որ աւատական իշխանների գիզա
հարստութիւնները յիշեալ միջոցով անցնում էին մաս-
նաւոր քաղաքացինների ձեռքը: Այդ բանը բաւակա-
նապատել է կապիտալիստական տնտեսութեան առա-
գալուն: Բազմաթիւ նշանաւոր կալւածներ պարտը
պատճառով անցել են փողատէրերի ձեռքը: Շա-
ազնւական հողատէրեր, որոնք մի անգամ անբաղդու-
թիւն էին ունենում վաշխառուի ձեռքն ընկնելու, այ-
նունեաւ ուրիշ հնարաւորութիւն չունեին՝ իրանց նախ-
կին գիրքը ձեռք բերելու և ճարահատեալ իրանք
քաղաքացի էին դառնում:

Սակայն ի՞նչն էր պատճառը, որ վաշխառութիւն
հետզհետէ աւելի էր զարգանում, ինչու համար է
աղջուականները վաշխառուներից փող վերցնում։ Մ
յին դարերում այդ բանի գլխաւոր պատճառը ին
չակրաց արշաւանքներն էին։ Պատերազմը առհաս
ըսկ շատ փող է պահանջում, իսկ խաչակիրները պ
ասամբ առձեռն փողից դուրկ ասակետներ էին, ուս
և ստիպւած էին լինում գրաւ դնել քաղաքացի փոխ
տուների մօտ իրանց անշարժ կայքերը։

Փոխատունների ու վաշխառունների բարգաւաճութելը,
ակսած 12-դ դարից, մասնաւանդ նկատելի էր Ֆլորէն-
ցիայում: Բազմաթիւ ֆլորէնցիական գերդաստաններ,
որոնք յետադայում երևելի դարձան, իրանց հարստու-
թեան հիմքը դրել էին նրանով, որ մեծ հողատէրերին
փող էին պարոք տւել և նրանց կալւածները գրաւ
էին վերցրել: Ինչպէս Խոտալիայում, նոյնպէս էլ Եպո-
պայի միւս երկիրներում Գերմանիայում: Անգլիայում
ու Ֆրանսիայում, փոխառու փողատէրերը հարստա-
նում էին, դիմուացնելով կալւածքների եկամուտները,
կամ գրաւելով հողերը:

Բայց խաչակը արջաւանքներից յետոյ էլ աւատական իշխանները չը դադարեցին փողի կարիք զգալ, այլ այդ կարիքը մշտատև դարձաւ, որովհետեւ քաղաքային կեանքը օրէցօր ծաղկում էր, և աւատատէրերը արդէն զգացել էին շքեղ կեանքի ճաշակը՝ Քաղաքային ազգաբնակութիւնը հետզհետէ հարստանում էր, իսկ աւատական կալւածատէրի եկամուտը պակասում էր։ Այդ բոլորի հետեանքն այն էր, որ ազնւականները շարունակում էին գրաւ զնել իրանց կալւածները և քաղաքացիներից փող վերցնել։ Անկառակած, քաղաքային ազգաբնակութեան մի նշանաւոր մասը հարստացել է՝ փարթամ կեանք ու զւարճութիւն սիրող ազնւականների թեթևամտութեան ջնորիիւն Պէտք է ի նկատի ունենալ, որ ազնւականները և իշխանները նեղ տեղ ընկած ժամանակ էին պարագ վերցնում, ուստի ստիպւած էին լինում ամենածանր տուկուներ վճարել։ Թէ որքան շահաւէտ էր վաշխառութիւնը միջին դարերում, պարզ երևում է այն հանգամանքից, որ հրէայ ազգաբնակութիւնը, որը այդ ասպարիզում մի տեսակ առանձնաշնորհութիւն ունէր,

արագութեամբ հարստանում էր: Թէև Խորայէլի արհամարւած ու հալածական որդիները յաճախ ենթարկւում էին ամենածանր տուգանքների՝ մշտապէս փողի կարօտ իշխանների ու պետական պաշտօնեաների կողմից, այնուամենայնիւ այդ բռնութեան դարերում առնում էր Խորայէլի ցորենը, ինչպէս և յետագայում քաղաքային արիստոկրատիայի տիրապետութեան օրերում, մինչև արդիւնագործական կապիտալիսմի ծաղկավթիթ դարեշրջանը: Հրէական ժողովրդի պատութիւնը պարզ ցոյց է տալիս, թէ որքան մեծ նշանակութիւն ունեն տնտեսական հանգամանքները, որոնք իրանց ուղածի պէս ձևակերպում են հասարակական կեանքը, ոչնչացնելով բոլոր միւս գործօների պայեցութիւնը:

Միջին դարերում փողերի կուտակւելուն նպաստում էր և այն հանգամանքը, որ հանքագործութեան միջացով ուղղակի փող էին պատրաստում: Արևմտեան եւրոպայում այս տեսակէտից առանձնապէս նշանակութիւն ունէին Գերմանիայի ու Աւստրօ-Ռւսնգարիայի հանքերը: Գերմանիայում իւրաքանչիւր հանգամանքութեան եւստաօր կարողանում էր մի աննշան գումար յիտ գցելով ձեռք բերել մի փոքրիկ հանք, որտեղից նա արդէն գուտ արծաթ ու ոսկի էր ստանում: Գիւղացիները նոյնպէս, իրք համայնքի անգամներ, իրաւունք ունէին ոսկի լւանալու գործին մասնակցելու և իրանց բաժինն ստանալու: Բազմաթիւ չնչին հողատերեր հանգագործութեան միջոցով հարստացան և երկելի գարձան: Տանուեինգ ու տասնութիցերուդ դարերում Գերմանիայում հանքագործութիւնը ստատիկ ծաղկած գրութեան մէջ էր, այնպէս որ հանգամանքութեան շորութեան մէջ էր, այնպէս որ հանգամանքութեան աւելի փող էր մըտ-

նում առանձին անհամների գրպանը, քան թէ վաճառականութեան ու վաշխառութեան միջոցով հարիւր տարւայ ընթացքում: Բայց գուցէ հանգամանքութիւնը ինքը այն ժամանակայ հետզհետէ զօրեղացող կապիտալիստական տնտեսութեան հետեանքն էր:

Հարստութեան մի ուրիշ աղբիւր էլ կուտակւած հողավարձն էր: Զօմբարտը այդ աղբիւրին մինչև անգամ առաջին տեղն է տալիս, իսկ մինչև այժմ յիշած աղբիւրները երկրորդական է համարում: Նրա կարծիքով կուտակւած հողավարձն է կազմում իսկական նախնական հալստութիւնը, որից առաջ եկաւ ժամանակակից կապիտալը: Բայց Զօմբարտի այդ կարծիքին շատերը հակառակ են: Խնդիրը պարզելու համար, մենք պիտի նախ ուղիղ գաղափար կազմենք միջին դարերի ընդհանուր հանգամանքների մասին:

Միջին դարերի վերջերում առևտրական դասակարգի մէջ նկատում էին երկու տարբեր խաւեր: մէկը կազմում էին մեծածաւալ առևտրական տները, իսկ միւսը՝ փոքրիկ արենստալուներն ու մանրավաճառները: Այդպէս կոչչած՝ յատկապէս գումարով առևտուր անողների, և մանր վաճառողների խանութներ գեռ չկային: Այլ գոյութիւն ունէին զոկ միծ և փոքր շրջանառութիւն ունեցող առևտրականներ: Բայց իրանց պատրաստած ապրանքը ժախող արհեստալորները, որոնց նմանները գեռ մինչև այժմ էլ պատահում են, ոչ մի յարաբերութիւն չունէին վաճառականական այն դասակարգի հետ, որը կենտրոնացած էր միջին դարերի ընթացքում միծ քաղաքներում: Յիշեալ երկու դասակարգերի մէջ ոչ մի կամուրջ չկար և չէր կարող լինել միջնացարեան հասարակութեան ամբողջ կազմակերպութիւնը աչքի առաջ ունենալով: Մենք այս շնորհիւ մի որկէ տասնամեակում աւելի փող էր մըտ-

տեղ պիտի ի նկատի առնենք, որ միջին դարերում փողային արիստօկրատիան և տոհմային արիստօկրատիան համարեա միենոյն ընտանիքներն էին կազմում: Մեր խօսքը վերաբերում է այն երկու տարրերին, որոնք քաղաքների ունենոր ու տիրապետող դասակարգն էին ներկայացնում: Սրանցից մէկը կազմւել էր գիւղական այն ազնւականներից, որոնք կամակոր կերպով, թէ ստիպւած, քաղաքներում բնակութիւն էին հաստատել, իսկ միւս տարրը, նեղ մտքով առած, բաղախին աղնըւականութիւնն էր, այսինքն քաղաքացի հարուստները: Քաղաքների զարգացման առաջին դարեցը ջանում, փոքրաթիւ ընտանիքներ, եկեղեցիների ու վանքերի հետ ձեռք-ձեռքի տած, սեփականացրել էին քաղաքային բոլոր հողերը: Իսկ այն ամենը, որ յետոյ էին գաղթել քաղաքները, տեղաւորւել էին կամ հին տոհմերին պատկանող, կամ թէ եկեղեցապատկան ու համայնշական հողերի վրա: Ամբողջ արհեստաւոր դասակարգը սկզբում ուրիշ բան չէր, բայց եթէ յիշեալ փոքրաթիւ ընտանիքներին հարկ տուղ մի հպատակ ժողովուրդ: Այդպիսով սրանք համարում էին երկրորդ աստիճանի քաղաքացիներ և տնտեսապէս մեծ մասամբ կախւած էին հին տոհմային ընտանիքներից: Այստեղից առաջ եկած երկպատկառումը հողատերերի և նրանց հպատակ ժողովուրդի մէջ այնպէս զօրել էր, որ ամեն տեղ մեծ անբաւականութեան պատճառ էր դասնում: Արա հետևանքն էին 13 և 14-դ դարերի դասակարգային ընդհարումները: Արևմտեան Եւրոպայի բոլոր երկիրների զարգացման միասնակութիւնը հասկանալի կը լինի, եթէ ի նկատի առնենք այն հանգամանքը, որ բոլոր քաղաքներում հողային հարկերի մեծ մասը անցնում էր փոքրաթիւ հողատերերի ձեռքը:

Հողերը շահեցում էին հետեւալ կերպով: Հողատէրերը իրանց հողերը վարձով էին տալիս արհեստաւորներին, ուր վերջիններս արհեստանոցներ էին կառուցանում: Բայց շատ անզամ էլ հէնց ինքը հողատէրն էր արհեստանոցներ ու խանութներ կառուցանում և յետոյ վարձով տալիս: Եւրաքանչիւր հողատէր ստիպւած ուներ իր հողաբաժնի վրա փողոցներ ու իրաւունք ուներ բացել և կառուցանել այնպիսի հիմնարկութիւններ, որոնք նրա կարծիքով աւելի շահնարկալի բերէին: Այդ պատճառով շատ անզամ էին տոհմային ընտանիքների սեփականութիւնն էին կազմում մասին ընտանիքները, փուռերը, ջրաղացները և սրանց մասն հիմնարկութիւնները, որոնց նրանք կապալով նման հիմնարկութիւնները, որոնց նրանք կապալով յանձնում էին արհեստաւորներին: Աւելի ևս մեծ արշագիւնը էին բերում այնպիսի կալւածները, որոնց հետ գիւնք էր բերում այնպիսի կապւած, որոնք օրինակ՝ որոշ արտօնութիւններ էին կապւած, որոնք օրինակ՝ գարեջուր պատրաստելու, ողի քաշելու, ջրաղաց բանագարեջուր պատրաստելու: Անա թէ ինչով է սելի հողային հարկի բարձրանալոց: Անա թէ ինչով է սել հողային համար այն հանգամանքը, որ տոհմերը աւելի բացատրում այն հանգամանքն էր: 1200—1400 թւերի ընուն աւելի հարստանում էին: 1200—1400 թւերի ընուն աւելի համար էր բարձրանում, որ նմանօրինակ երևոյթ յետեամբ էր բարձրանում, որ նմանօրինակ երևոյթ յետեամբ էր մէկ էլ միայն կապիտալիսմի ամենածաղկած դարեցը ջանումն ենք նկատում:

Բայց որքան աշխատանքը աւելի արդիւնաւէտ էր դասնում և հաղորդակցութեան ձանապարհները զար-

գանում էին, այսքան աւելի ու աւելի կապալին փոխարինում էր հողերի վաճառելը, որով փողերի կուտակելը տոհմերի ձեռքին—իրանց վախճանին էր հասնում:

Զօմբարտի կարծիքով, այստեղ պէտք է որոնել բաղաքացոց հարստութեան սկիզբը: «Այն գումարները, որոնցով 13-դ և 14-դ դարերում, իտալիայում ու Ֆլանդրիայում, իսկ ուրիշ երկիրներում 14-դ դարից սկսած, ընդարձակ ծաւալով առուտուր էին անում, զուացել էին հողային վարձերից: Այդ գումարներն են կազմում այն նախնական գումարները, որոնցից առաջ եկաւ իտական կապիտալը: Աշխատանքի երկարամեայ վարգացման ընթացքում, աւելի ու աւելի աճած հողավարձերից հետզհետէ կազմւել էին յիշեալ գումարները: Ուրիշ խօսքով ասած՝ աշխատաւորի համար աննկատելի կերպով՝ հողատերերը իւրացրել էին արհեստաւորի աշխատանքի փոքրիկ մասնիկները, որոնցից ժամանակի ընթացքում առաջ էր եկել մի պատկառելի դրամագլուխ՝ կապիտալիստական տնտեսութեան համար... Փամանակակից կապիտալիստի արմատները դանուում են սերունդ առ սերունդ դիզեւած հողային վարձերի մէջ. այդպէս է առաջ եկել գոնէ այն դրամագլուխը, որի միջոցով յետոյ նախաւոր եղաւ փողով փող ըերելու գործողութիւնը:

Մեր նկարագրած հանգամանքները ցոյց են տալիս, որ միջին դարերում փողերի կուտակումը առաջցել է ոչ թէ մէկ, այլ բազմաթիւ պատճառներից: Առասարակ, քաղաքացու հարստութեան ծագումը շատ էլ հեշտութեամբ չէ բացատրում, որպինուն տնտեսական զանազան գործոնները փոխադարձարար ազգում են իրար վրա և երեսյթները այնպէս խառնշտորուում

են, որ շատ գժւար է լինում որոշել, թէ որն է պատճառը և որն է հետևանքը: Ուստի մենք, կարող ենք շեշտել, որ բոլոր մինչև այժմ արտայայտած տեսութիւնները այս կամ այն տեսակէտից անբաւարար են: Եթէ մենք ուշադրութիւն դարձնենք փողերի կուտակման բոլոր հարաւոր միջոցների վրա, ապա ինքն ըստ ինքեան հարց կը ծագէ, թէ արդեօք մեծ հարստութեան առաջ գալը և կապիտալի ծագումը իրարից անկախ երևոյթներ են, թէ մեծ հարստութիւնը ինքն ըստ ինքեան կապիտալ ստեղծելու բնաւորութիւն ունի: Ինչպէս արդէն բացատրել ենք, կապիտալը ինքն իրան աճելու բնաւորութիւնունի, բայց այդ յատկութիւնը ձեռք է բերում նա այն ժամանակ, երբ բանւորական աշխատանքը ազատութեան մեջ է լինում: Որքան էլ մեծ լինի կուտակւած փողերի քանակութիւնը, եթէ յիշեալ պայմանը գոյութիւն չունենայ, հարստութիւնը, գումարը, կը մնայ առանց շահ բերելու. նա կը ներկայացնէ մի նիւթական բարիք, որի միջոցով գումարատէրը կարող է թերևս շատ գեղեցիկ կեանք անցուցանել, որը սակայն չէ կարող նորանոր բարիքների աղրիւր դառնալ, այսինքն շահաւորել: Նախակապիտալիստական ժամանակներում փողը միայն ճախսելու համար էր (ոչ թէ փող աշխատելու համար): Մարկսը իւր «Կապիտալ» գրքի մէջ այն միտքն է յայտնում, թէ առհասարակ ամեն մի բարիք, որ արդիւնագործւում է իրեւ ապրանք, արդէն ինքն ըստ ինքեան աճելու յատկութիւն ունի: Նոյն յատկութիւնը ունի և բանւորական ոյժ կոչւած ապրանքը, որը արդիւնագործական ընթացքի մէջ անընդհատ ծնում է նոր ապրանքներ, որոնք շուկայում ծախւելով փող են գոյացնում ապրանքատիրոջ համար:

Մենք ցոյց տւինք, թէ ինչպէս է առաջ գալիս կապիտալը. բայց մեր խօսքը դեռ վերջացած չէ: Փողը առաջ գործ էր ածւում առևտրական և ապրուստին վերաբերող նպատակների համար. ունեոր քաղաքայիշները մեծ մասամբ նստում էին իրանց մայրենի քաղաքում և, հողային վարձերը ստանալով, պատւաւոր կերպով ապրում էին, իսկ ժամանակ անցկացնելու համար՝ զբաղվում էին քաղաքային գործերով: Բայց փողերի կուտակման հետ զուգընթաց, լուելեայն տեղի էր ունենում մի ուրիշ գործողութիւն՝ աշխատանքի ազատագրութիւնը. առաջ էր գալիս աշխատաւորների մի ամրող բանակ, առանց որի անհնար է կապիտալը շահեցնել: Թէ ինչպէս և ինչ հանգամանքների մէջ է սկիզբ առել այդ ծանրակշիռ երևոյթը, այդ բանի նկարագրութիւնը սնտեսապատմագրի գործն է, իսկ մենք կարող ենք միայն մատնացոյց անել կարեոր կէտերի վրա:

Երբ դեռ քաղաքները նոր էին զարգանում, արհեստաւորի աշխատանքը համարում էր՝ աղատ մարդու համար անվայել մի գործունէութիւն: Բացի այդ, արհեստաւորի պատրաստած իրերը, որոնց մէջ զլիստոր տեղը բռնում էին հագուստեղինը, տնային կահկարասիքը և տնտեսական գործիքները, համեմատաբար քիչ էին վաճառում: Տնտեսութիւնը դեռ մեծ մասամբ ինքնագործական աստիճանի վրա էր. իւրաքանչիւր ընտանիք ինքը ամեն բան պատրաստում էր, ինչ ու իրան հարկաւոր էր: Արտերի մշակութիւնը և տնտեսական գործիքների ու տնային կահկարասիքի պատրաստելը ճորտերի ու կանաչն կահկարասիքի պատրաստելը ճորտերի ու կանաչն պատրաստութիւնն է համարում: Դեռ մինչև այսօր, մանաւանդ գիւղական ազգաքնակութեան մէջ, տեսնում ենք, թէ ինչպէս

տանտիկինը իւրիկը ձեռին բռնած՝ թել է մանում, կամ թէ քեարգեահի հտեւում նստած՝ զանազան կտորներ է գործում:

Որքան աւելի ծաղկում էին քաղաքները, նոյնքան աւելի բարոքում էր արհեստաւոր գասակարգի զրութիւնը: Արհեստաւորները, որոնք, ի հարկէ, դեռ կատարելագործւած վարպետներ չէին, սկզբում գործում էին նախապէս վերցրած պատէրի համեմատ, կամ թէ կարկատան էին անում: Պահանջի զարգանալով նրանք աւելի աղատ գիրք էին ստանում, իրանց տիրոջ թոյլտւութեամբ զնում էին ուրիշների համար աշխատելու, որոշ վարձատրութիւն ստանալով: Հպատակ արհեստաւորի զրութեան այդպիսի փոփոխութիւնը, և այն հանգամանքը, որ նա փոքր առ փոքր աղատում էր ստրկական կապերից, թերեւ առաջ էր գալիս այն բանից, որ նա այժմ իր տիրոջ համար գործելով շատ էլ մեծ շահ չէր բերում: Ազնաւականները, քաղաքացի դառնալով, այլև չէին կարողանում առաջւայ չափ գործի գնել ճորտի ոյժերը, թէկ պարտաւոր էին կերակրել նրան: Ուստի երկու կողմի համար էլ ձեռնատու և նպատակայարմար էր՝ ժամանակի պահանջի համեմատ փոփոխութեան ենթարկել իրանց նախկին յարաբերութիւնը: Ճորտը թէկ դեռ արտաքուստ կախւած էր մնում իր տիրոջից, բայց նա այլև պարտաւոր չէր նրա համար աշխատել, այլ միայն պարտաւոր էր որոշ հարկ տալ նրան: Մինչդեռ առաջ աշխատաւորը ուրիշ բան չէր, բայց եթէ լոկ ապրանք, այժմ, որոշ չափով ինքը իր անձի ու աշխատանքի տէրն էր: Այդպիսով, աշխատանքի աղատագրութեան առաջին բայլն արւած էր:

Մի ուրիշ հանգամանք էլ բաւական նպաստեց

արհեստի զարգացման, մի շարք կարևոր արհեստներ կանացից անցան աղամարդկանց ձեռքը: Եթէ կարելի լինէր ճշութեամբ որոշել այն ժամանակը, երբ աղամարդը իր ձեռքն առաւ ոստայնանկութիւնը, կազմակերպեց դորձը, և առհասարակ լուրջ ուշադրութիւն դարձեց այդ արհեստի վրա, ապա մենք կիմանայինք, թէ երբ է սկիզբ առել քաղաքների ծաղկումը:

Այս բոլորից երեսում է, որ հարստութեան կուտակւելու գործողութեան հետ զուգընթաց տեղի է ունեցել ու աշխատանքի ազատազրութիւնը: Թէ ինչպէս է յետոյ վերջնականապէս գլուխ եկել աշխատանքի աշխատութիւնը, կամ թէ ինչպէս է հիմնովին լուծել ճորտական յարաբերութիւնը, այլ մասին մենք միայն մի համառօտ ակնարկ կանենք: Այդ բանը կատարել է երկու ճանապարհով: Ճորտը իր տիրոջ հետ փոխադարձ համաձայնութիւն կայացնելով մի որոշ գումար էր տառիս նրան և ազատութիւն էր ստանում: Կամ թէ նա հասնում էր իր նպատակին՝ բռնի ոյժ գործ դնելով: Միջին դարերի լնթացքում, արհեստաւորները շարունակ կրիւ էին մղում հին տոհմերի դէմ: Ակզրում այդ կրիւ նպատակը արհեստաւորի անձի ազատութիւնն էր, իսկ յետոյ, երբ արդէն արհեստաւորները կազմակերպւել էին համքարութեան դրօշակի տակ, նրանց կուի նպատակն էր՝ հաւասարել հին տոհմերի հետ քաղաքական ասպարիզում: Շատ քաղաքներում միջին դարերի վերջերում արդէն համքարութիւնները իրանց ձեռքն էին գցել քաղաքական իշխանութիւնը:

Քաղաքների տնտեսական բարգաւաճման հետ միասին, արագութեամբ լնդարձակում էր նրանց շահերի ու տնտեսութեան լրջանը: Փողոցներ կառուցանելու համար այլևս չէր բաւականանում տեղական

աշխատաւոր բանակը, և անա սկսւում է անտուն-անատէր մարդկանց մի զօրեղ հոսանք դէպի քաղաքները: Այդ մարդկիկը լինուած էին գիւղական արհեստաւորներ, կամ թէ պաշտօնից արձակւած զինուորներ, նոյնպէս մուրացկաններ և ամեն տեսակի թափառաշրջիկներ: Եկեղեցական վերանորոգութեան դարիշրջանից սկսւած, յիշեալ մարդկանց վրա աւելացան փակւած վանքերի «անգործ» մնացած աբեղանները: Բոլոր այդ եկուորներից կազմւում էր այն բանակը, որից ստանում էր նոր ծագող կապիտալիսմը իրան անհրաժեշտ բանւորական ոյժը:

Մենք ցոյց տւինք, թէ ինչպէս է կատարւել փողի կուտակումը և աշխատաւոր ոյժերի ազատազրութիւնը և համախմբումը, ուրեմն թէ ինչպէս են առաջ եկել կապիտալիսմի համար անհրաժեշտ նիւթական պայմանները: Այժմ մի նոր խնդիր էլ է ծագում՝ ինչպէս է առաջ եկել ինքը կապիտալիսմը, այսինքն այն ողին, որը տիրում է նրա մէջ: Այդ նոգեբանական երկոյթի, այսինքն կապիտալիստական ոգու արթնանալու պատմութիւնը պիտի անենք հետեւալ զլիսի մէջ:

III. ԿԱՊԻՏԱԼԻՍՄԻ ՀՐԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Հին աշխարհայիեցքի համեմատ, բոլոր բաների հիմքը կազմում են մեծ քաղաքարները (իղէանները), որոնք ծագում են մեր մոլորակի այս ու այն անկիւնում թերևս մի որ և է ճգնաւորի գիւղում, և այնտեղից սկսում են իրանց յաղթական արշաւանքը դէպի աշխարհի բոլոր կողմերը: Քրիստոնէութեան ծագումը ու տարածւելը վերագրում են, ի միջի այլոց, մի բարձրագոյն գորութեան, կամ թէ մի լնտերեալ մարդու շրթունքից գուրս թռած աստուածային «գաղափարի»

վարակիչ ոյժին: Նոյն եղանակով, խաչակրաց պատերազմների ծագման ու այլ զօրեղ ձեռնարկութիւնների ու շարժումների պատճառը որոնում են այս ու այն հանճարեղ անհատի ծնած գաղափարի մէջ: Տարակոյտ չկայ, որ հանճարեղ գաղափարները, զօրեղ սկզբունքները, ուղղութիւն են տալիս համաշխարհին պատմութեան. սակայն հարց է ծագում, թէ արդեօք այդ գաղափարները իրանք որոշ երևոյթների հետևա՞նքի չեն: Պատմութեան նիւթապաշտական ըմբոնողութեամբ, որը հիմնուած է կարլ Մարկոսի ուսմունքի վրա, բոլոր պատմական երկոյթների պատճառը պէտք է որոնել տնտեսական հանգամանքների մէջ. քաղաքական ու կրօնական պարագաները, գեղարւեստն ու գրականութիւնը, լոկ վերնատունն են կազմում, մինչդեռ հիմքը տնտեսական կեանքն է: Այդ հայեացքի համեմատ, խաչակրաց արշաւանքները ուրիշ բան չեն, բայց եթէ սովոր ամրոխի գործած ասպատակութիւններ: Եւրոպական ազգաբնակութիւնը չափազանց աճել էր, գոյութիւն ունեցող տնտեսական դրութիւնը ծանր էր, այնպէս որ մի ուժեղ արհաւելքը անհրաժեշտ էր՝ տեւրոդ ազգաբնակութիւնը բնաջնջ անելու համար: Խոկ խաչակրաց արշաւանքների գաղափարական հիմունքը, այսինքն անհաւատների ձեռքից սրբազն գերեզմանը խլելու միտքը, որ արագութեամբ տարածեց ամբողջ Եւրոպայում, միայն երկրորդական նշանակութիւն ունէր: Այն, խաչակրաց պատերազմի գաղափարը գուցէ երբէք էլ չէր իրականանայ, եթէ Եւրոպան իրան ըստիպւած չը զգար՝ արիւն բաց թողնելու իր երակներից: Անպայման պիտի որևէ բան պատահէր, որպէսզի տնտեսական տագնապի պատճառով դիմուած պայթուցիկ սիւթը ցրւէր: Եւ որովհետև ժամանակը զլիսառը կրօնական տրամադրութիւն ունէր, ուստի

նական է, որ պատերազմական ձեռնարկութիւնը պիտի կրօնական կնիք կրէր, և պատերազմի բուն տնտեսական յարաբերութիւններից բղխած պատճառները կիտի կրօնական շարժափիթների հետ շաղկապէին: Եղայլէս է մատերիալիստների, նիւթապաշտների կարծքը:

Պատմութեան մատերիալիստական ըմբոնողութիւնը շատ համաշխարհային երկոյթների վրա է լոյս փուել, և յաճախ պարզաբանել է տնտեսական ու հոգեկան հանգամանքների մէջ եղած պատճառական կուղերը, այնուամենայնիւ նաև չէ կարող կատարելապէս մնախալական համարւել: Զօրեղ կերպով շշտելով տընտեսական պատճառները, յաճախ մոռացութեան է տախ նա գողափարական զործոնները, որոնք մերթ զօրեղ, մերթ թոյլ կերպով ազգում են քաղաքակրթութեան զարգացման վրա: (Նախակապիտալիստական ամանակներում այդ գործօնները առանձնապէս աղեցիկ էին): Եթէ պատմական զէպքերը քննելու ժամանակ մենք չենք կամնում բացատրութիւն որոնել մահաճ գործօնների, «ընդհանուր» պահանջի ազատութեան գոտման, մարդկային պատասխանատութիւնն զացմունքի և նմանօրինակ բաների մէջ, ապա յաճախ լիտի իրողութեան անմիջական պատճառ համարենք ացարձակ պատահմունքը կամ թէ զանազան հանգանքների պատահական զուղագիպութիւնը: Հենց մի նատեսական սխստեմի զարգացման գործում դեր են աղում բազմաթիւ գործօններ, որոնք բոլորը միասին անկշռելի» հանգամանքներ են կոչում: Ինչպէս արէն ցոյց ենք տևել, կապիտալը ծագել է լոկ տնտեսական պատճառներից, բայց մենք մի սոսկալի սխալ ործած կլինենք, եթէ կապիտալիստական ոգու ծառմն էլ նոյն պատճառներին վերագրենք: Կուտակւած

գոյքերը միայն այն դէպքումն են կապիտալական յատ՝ կարգին պատշաճ» կեանք անցուցանել իսկոյն թողնում կութիւններ ընդունում, երբ սեփականատէրը կամինում ին իրանց գործերը և անպարիզից հեռանում, որպէս է գործադրել նրանց կապիտալիստական ձեռնարկութիւնների վրա: Այդպիսով ուրեմն կապիտալիստը ոչ արգու փողը շատանում է, այնքան աւելի զօրեղանում թէ մի պատմական անհրաժեշտուրիւն է, այլ լոկ մի նրա՝ փող ձեռք բերելու ցանկութիւնը:

պատմական եղելութիւն: Եւրոպան կարող էր միջին ժին ու նոր ժամանակակիր տնտեսական աշխարհարերի վերջերում մի այնպիսի ուղղութիւն ըստել այսացքները տարբերում են՝ փողի նշանակութեան տնտեսական տեսակէտից, ինչպէս հռոմէական աշխարհական աշխարհութիւնը կամ թէ արեելեան Սովիայի երկիրները, այսինու համար էր, իսկ այժմ՝ շահեցնելու համար: ուր երկար դարերի ընթացքում գումարներ էին դիզա պիտի շարունակ ամէ, «Ո՞վ է բնաջինջ անում առաջ, բայց կապիտալիստական ձեռնարկութիւնները կատական աշխարհանշացքները և մանրավաճառ շահացակայում էին, մինչև որ եւրոպացիք ներս մտան կտին ընդհանուր յարգանքի առարկայ դարձնում»: այդ երկիրները: Ամերիկայի Պերուա պետութեան մէջ յդ հարցն է տալիս Զօմբարտը, ժամանակակիր ալն-նոյնպէս ահազին գանձիր էին դիզել, բայց կապիտալիստական հանելուկը քննելով, և մէջ է բերում մի քալիստական ձեռնարկութեան հետքն անգամ չկար: Նաշի գիտակեր, որոնք նոր լոյս են սփոռում ինդրի վրա: խակապիտալիստական ժամանակներում, գոյքով կամ օմբարտը չէ ընդունում այն միտքը, թէ կապիտալիստով հարուստ բոլոր մարդկանց մէջ տիրապետում է ստական զարգացման հիմնական պատճառը մարդկան գաղափարը, թէ փողը միայն ճախսելու համար է, որ «ընաւորութիւնն» է: Նրա կարծիքով, կապիտալիստը է լինում միայն այն մասին, թէ ինչ բանի վրա մը յատկապէս եւրոպական ազգերի ծնունդն է: Եւծախսել՝ պատերազմի թէ խաղաղ կեանքի վրա, բայց պական կլիման և եւրոպական ժողովուրդների ցերեպաշտեկեղեցական հիմնարկութիւնների, թէ վայրենիսկան յատկութիւնները, ըստ Զօմբարտի, զեր են կեր ու խումի վրա, գեղարեւստական թէ գիտական ազացել այդ երկոյթի տուած գալու մէջ: Կամ աւելի նոյատակներով... հիմնական միտքն այն է, թէ հաշտն ասած՝ կապիտալիստը պայմանաւորւած է Եւրուսու պիտի բոլորովին ըլ մտածէ՝ իր փողը շապայի ընական ու ցեղական հանգամանքներով:

Անտարակոյս, ժամանակակիր տնտեսական կեանշարեան ասպետի հայեցողութեան, որպէս տնտեսական, մի քանի երեսոյթները պայմանաւորւած են այդ երգործունէութիւնը: Տնտեսութեան միջոցով փող աշխատ, գործոններով, կամ թէ նրանցից մէկով կամ միւս մինչև նորագոյն ժամանակները համարում էր, Միայն բարեխտոն կլիմայի շրջանում, որը հայնպէս արմատացած էր, որ գեռ մինչև 18-դ, դարեական բերքերի տեսակէտից, կարող էր տնտեսական քաղաքացի հարուստ վաճառականները, հէցոյ որ այն լուսուրան բարձրագոյն աստիճանի ուժգնութեան քան փող էին ունենում, որ կարող էին իրանց գոյացաւունել: Միւս կողմից, բազմից ապացուցւած է, որ

առանց եւրոպացու որոշ յատկութիւնների, առանց նրա բուռն աշխատասիրութեան, աշխոյժ քնաւորութեան և նիւթական աշխարհայեացըի, երեակայել անգամ չէր կարելի այն բարձր տնտեսական զարգացումը, որին հասել է մեր ժամանակը։ Բայց Զօմբարտը բաւարար չէ համարում այդ բացատրութիւնը։ «Որովհետեւ լոկ ցեղական յատկութիւնը ընդունել իբրև մի տնտեսական երեոյթի միակ հիմքը, նշանակում է աշխաթող անել հոգեբանական պայմանները, նշանակում է վաղօրօք կտրել պատճառական կապը և սնանկ հըռչակել բոլոր իրական բացատրութիւնները»։ Նոյնքան անբաւար է թուռմ նրան այն կարծիքը, իրը թէ արդի կապիտալիստական ուղղութիւնը կապ ունի այսու այն կրօնական վարդապետութեան հետ։ Ուստի կապիտալիսմի մասին բաւարար բացատրութիւն տալու համար՝ փորձում է նա մատնացոյց անել որոշ պատմական հանգամանքների վրա։ Մենք իսկոյն կը տեսնենք, թէ որքան է համուռմ նա իր նպատակին։

Ամեն բան կարելի է ձեռք բերել ոսկու միջոցով։ Դեղին մետաղի սէրը յատուկ է բոլոր ժամանակների ու բոլոր երկիրների մարդկանց, ինչ զարգացում է ունենան նրանք։ Որոշ տարեցրածններում գեղին տենդը մինչև անգամ համաձարակի բնաւորութիւն է ստանում։ Այդպիսի մի ժամանակ էր միջին դարերի վերջին մասը։ Սկզբում զուտ գաղափարական սպատակներ էին պատճառը, որոնց հասնելու համար փող ու գարձեալ փող էր պահանջուռմ։ Արբազան գերեզմանը ազատելու ցանկութիւնը մի գաղափար էր, որը ողերուն էր միջնադարեան բոլոր եւրոպացներին։ Տակաւի 16-րդ դարում իսպանական իշխանները յանձնախմբեւ էին ուղարկում գէպի ոսկեայ ափերը, միմիայն այնպատակով, որ միջոց գտնեն՝ խաչակրական արշա

ւանքները շարունակելու։ Զոմբարտի կարծիքով, թիւզանգացոց ու արաբացոց հարուստ ու փայլուն կուլտուրայի ներգործութիւնից եւրոպացի խաչակիրների սրտում զարթնեց աշխարհային ուրախութիւնների ու ձոփ կեանքի ցանկութիւնը, և եւրոպացու ամբողջ աշխարհայեացքին երկրային ոգի ներշնչեց։ Եւ այդ մի պատահներն էր, որ այդ մարդիկ միաժամանակ միջոց ու ճանապահ գտան՝ իրանց նոր պահանջներին բաւարարութիւն տալու համար։ Իտալական ժողովուրդները, ծծելով արևելքի նիւթական հիւթը, անսահման, հարասութիւն էին զիգել իրանց քաղաքներում։ Ուզիւ այդ ժամանակ, նոր բացւած երկիրներումն էլ աղնիւ մետաղների բազմաթիւ հանգեր գտան։

Բայց միջին դարերի վերջերում գոյութիւն ունէին քաղաքակրթական բազմատեսակ հոսանքներ, որոնք շարունակ միմեանց վրա ներգործում էին, ուստի և շատ դժւար է որոշել, թէ այդ հոսանքներից որն էր պատճառը և որն էր հետեւանքը։ Ուրեմն կարելի է վերոյիշեալ երեոյթները բացատրել բոլորվին հակառակ ուղղութեամբ, այսինքն ասել, թէ աղնիւ մետաղների շատութիւնն էր պատճառը, որ կենսական ամբողջ աշխարհայեացքը երկրային ուղղութիւն ստացւա։ Յայտնի է, որ բոլոր առետրական կենտրոններում, ուր փողային մեծ գումարներ են գիգուռմ, սովորաբար ազգագրնակութեան բոլոր խաւերի մէջ ձոփ ապլուստի պահանջ է զարթնում, և ամենքը ձգտում են գեղեցկացնել ու քաղցրացնել իրանց կեանքը։ Այդ ըանին իրը ամենափայլուն ապացոյց կարող էն ծառայել Գերմանիայի Առողջուրդ ու Նիւրնբերգ քաղաքները, որոնք հարստացան առուտուրի շնորհիւ, Նիգերլանդիայում նոյնպէս, գեղարւեստի յանկարծահաս ծաղկումը երկրի նիւթական առաջադիմութեան անմիջական հետեւ

ւանքն էր: Այդ բոլորից յետոյ արդէն, եւրոպական աշխարհայիշացքի երկրային դառնալու մի երկրորդական պատճառն էլ կարելի է համարել այն, որ եւրոպացիք շփում ունեցան արևելքի կուլտուրական ազգերի հետ: Ի՞նչ օգուտ են բերում մի խեղճ մարդուն: աշխարհի բոլոր հարածութիւնները, եթէ նա պիտի այդ բոլորը ուրիշի սեփականութիւն համարէ, և չը գիտէ, թէ ինչ միջոցով բաժին ստանայ այդ գանձերից: Մէկ բան միայն բոլորովին հասկանալի է, որ այն մարդը, որը ինքը ոչինչ չունի և արդէն լրմրնել է, թէ փողով ամեն բան ձեռք է բերում, ոչ մի արգելքի առաջ կանգ չէ առնելու և առնեն տհանակ հնարիներ է մտածելու, որպէս զի ինքն էլ փողի տէր գտնայ:

«Փողը կեանքի ամենաբարձր նպատակն է, նա մի ամենակարող ոյժ է»—ահա թէ ինչ խօսքերով է ժամանակակից մարդը իր գուանանը արտայայտում: Զօմբարտը բացատրում է այդ երևոյթը հետեւեալ երպով: «Այն օրից սկսած, որ մարդը հասկացաւ փողի զօրութիւնը, և գիտակցեց կամ երկակայեց, թէ փողով ամեն բան կարելի է ստեղծել, նա իր բոլոր ուշադրութիւնը փողին նւիրեց, սկսեց դէպի փողը ձգտել ջերմագին հռանգով, անզուսպ տենչով»: Այդ ամենաքի հետեւանքն էր, որ միջին գարերում առաջ եկան փող ձեռք բերելու ինքնուրոյն եղանակները՝ թագւած գանձեր որսնելը և սոկեփոխութիւնը (ալիսիմիան): Ցնուեալական զրական ուղղութեան տակ սնւած, ժամանակակից մարդու համար միանգամայն անհասկանալի է, թէ ինչպէս երկար ժամանակի ընթացքում մարդիկ ընկած են եղել արհեստական կերպով ոսկի շինելու անհիմ ցնորքի ետեկից: Բայց միջնադարեան եւրոպացու բոլոր փողասիրական գործողութիւնները, ինչպէս և ազնւաշուք իշխանների կողոպտական-տւագակային

«տնտեսութիւնը» և պապերի հնարուծ՝ «մեղած թողութեան» միջոցով փող ձեռք բերելու մեթօդը՝ այդ բոլոր միասին առած այնուամենացնիւ կապիտալիստական ոգու հետքն անգամ չեն ցոյց տալիս իրանց մէջ: Զօմբարտի կարծիքով, մարգկային մտածողութեան միանգամայն նոր եղանակի հետեւանքն էր այն միտքը, թէ խաղաղ տնտեսական ճանապարհով նոյնուն կարելի է փող ձեռք բերել (հարստանալ): Այժմ՝ մենք հաղիւ կարող ենք երկակայել, թէ որքան նուրբ մտածողութիւն էր հարկաւոր, որպէս զի մարդիկ առաջին անգամ լրմրնենքն, թէ փողով կարելի է փող աշխատել, թէ որտեղ և ինչ հանգամանըների մէջ է այդ միտքը ծագել, մենք չենք կարող որոշել, մենք միայն կարող ենք ինթաղընել, որ այդ գիւտը անողները պիտի ցածր ծագում ունեցող անհամաներ եղած լինեն, որոնք փող ձեռք բերելու ոչ մի ուրիշ հնարաւորութիւն չունեն: Այդ մարդիկ ունեցել են առողջ զատողութիւն, առանց երկակայութեան ուստի և ազատ են մնացել ոսկեկործութեան կամ ոսկեփոխութեան քօմանտիկական իդէաներից: սրա փոխարէն նրանք լաւ հաշիւ լրմրնող են եղել և կազմակերպող ձիրք են ունեցել, միաժամանակ ծանօթ լինելով մանրավաճառական բոլոր գաղտնաբանութիւնների հետ:

Ուրեմն կապիտալիստական ոգին ծնւել է մի ամենական միջնորդութեան այդ ոգու հայրը մանրավաճառութիւնն է, իսկ մայրը՝ փողասիրութիւնը: Այսուսմենացնիւ, կամ թէ գուցէ հէնց այդ պատճառ վ, նա իր համաշխարհային պատգամ ունէր: Բոլոր ուժգին սրհաւիրքները, որոնք քարուքանդ արին միջնադարեան-աման-տւատական աշխարհը, նոր աշխարհայիշացքը, եծում են գիտերը և նոր երկիրների բացումը, սրպետական դասակարգի սնանկութիւնը՝ այդ բոլոր

հանգամանքները միասին չը կարողացան խորտակել արիստօկրատ հասարակութեան կազմը, իսկ կապիտալիստական ոգին մէն-մէնակ դլուխ բերաւ այդ գործը: Որպէս մի տարափոխիկ հիւանդութիւն, նա վարակեց արագութեամբ ազգաբնակութեան բոլոր խաւերը, արիստօկրատ կալւածատիրոջից և ասպետից սկսած մինչև թափառաշրջիկ ձեռնածուն ու մուրացկանը, խորտակելով դասակարգային հին պատճեշները և նորերը կառուցանելով: Մարդկային պատմութեան մէջ տեղի ունեցած յեղափոխութիւններից ամենամեծը այդ էր: Մի բոլորովին կարճ ժամանակամիջոցում կապիտալիստական կուլտուրան հիմքից փոխեց հասարակական կազմը: Մասնաւնդ արդիւնագործական, կապիտալիսմի ծաղկած օրերում, սկսած 19-դ դարի կէսից, երբ Ամերիկան դարձաւ կապիտալիստական ձեռնարկութեան մեծածաւալ ներկայացուցիչը, հասարակական կազմի մէջ այնպիսի յանկարծահաս փոփոխութիւններ տեղի ունեցան, որպիսին չէր պատահել տնտեսական ոչ մի ուրիշ դարեցըանում: Ամբողջ ժողովուրդը պրօլետարիատ դարձնելը՝ մի խումբ մարդկանց շահի համար, և վերջիններիս կատարելապէս առանձնաշնորհական դիրքը, հարստապետութեան զարգացումը, և նրա ձեռքին ահոելի ոյժ ու միջոցներ կենտրօնացնելը—ահա կապիտալիսմի վերջին խօսքը:

IV. ՄԱՐԴԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՄԻ ԱԶԴԵՅՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Կապիտալիսմը այնպիսի մի շրջան է առաջ բերել քաղաքակրթական կեանքի մէջ, որի համապատկերը գոյութիւն չէ ունեցել համաշխարհային ալատութեան ընթացքում: Մի նոր սերունդ է առաջ եկել, որի ներ-

կայացուցիչը նիշշէի յայտնի երկնամարդը չէ, այլ կապիտալիսմի ոգով ներշշւած, եսասէր ձգտութներով ղեկավարող երկրամարդը, որի համար ամենաբարձր բանը նիւթական շահն է: Սակայն այդ նիւթապաշտ մարդը այն ոյժերի կարգին է պատկանում, որոնք միշտ դէպի չարն են ձգտում, բայց միշտ բարիք են առաջացնում: Հաշւապահական-շահագիտական ոգին թափանցել է հասարակական բոլոր հիմնարկութիւնների մէջ. նա տիրապետում է անհատի կեանքին՝ օրորոցից սկսած մինչև գերեզման. կենսական իւրաքանչիւր երկոյթ, մարդկանց բոլոր յարաբերութիւնները՝ նրանց արդիւնաբերութիւնն ու ստեղծագործութիւնը—բոլորն էլ հաշւի ու կշռի առարկայ են դարձել:

Նորագոյն տնտեսական բացիօնալիսմի ազդեցութեան տակ կապիտալը բանաւոր արարածի կիրպարանը է ստացել, բայց միւս կողմից, բանաւոր արարածին էլ իշեցրել է մինչև հլուգործիքի աստիճանը: բանաւոր մարդը մի կոյր գործիք է դարձել կապիտալիսմի տիրապետութեան ներքոյ: Շահասիրութեան զգացմունքը արմատ է բռնել բոլոր դասակարգերի ու խաւերի մէջ. տնտեսական գործունէութիւնը համարեաբացուագէս շահագիտական նպատակով է ղեկավարում: Կապիտալիստ—ձեռնարկուի գործունէութիւնը այլ ես չափ ու սահման չէ ճանաչում: Այդ նրա չարագուշակ ճակատագիրն է, նրա դժբաղդութիւնն է, որ նա երբէք չէ կարողանում բաւականութիւն զգալ: Նա կանգնած է տնտեսական ասպարիզի կենտրօնում, ուր անընդհատ կոխւ է տեղի ունենում, նա պիտի անընդհատ նոր ապրանքներ հնարէ և նոր շուկաներ որոնէ, որպէսզի կարողանայ ուրիշների մրցութեան դիմանալուստի և կամայ թէ ակամայ պիտի ամեն բան ոտնակոխ անէ, ինչ որ իրան արգելառիթ է հանդիսանում,

մինչեւ որ ինքն էլ կը տապարէէ տնտեսական կուի մէջ: Աւելի լաւ գրութիւն չունեն նրանց առաջնակարգ գործակատարները, որո՞ւ մի տեսակ «միջն դասակարգ» են կազմում: Յաճախ սրանց ոռմիկը չէ բաւականանում՝ «դասակարգին պատշաճ» կեանք անցուցանելու համար, ուստի կողմանի աշխատանք են յանձն առնում, որը պալառում է նրանց վերջին ոյժը և առաջ է բերում մեր ժամանակին բնորոշ պատկեր տւող ընդհանուր նեարդայնութիւնը: Իսկ բանւորները: Անկառակած նրանց ապրուստը սկսած կապիտալիստական տնտեսութեան զարգանալու օրերից, հետզհետէ լաւացել է, այնուամենայնիւ նրանք գեռ չեն հասկել մի իսկապէս ըարօթ գրութեան, որովհետեւ պարբերաբ կրկնուող անդորրութեան պատճառով, յաճախ կատարելապէս զուրկ են մնում ապրուստի միջնաներից, ուստի և հետզհետէ սաստկանում է նրանց զայրոյթը՝ դէպի տիրապետող տնտեսական սիստեմը: Բարյական տեսակետից, կապիտալիստը արդէն շատ մեծ հարւած է հասցըել աշխատաւոր զասակարգին: Նա հետզհետէ սահմանափակել է բանւորի անկախութիւնը և վերջ ի վերջը դարձրել է աշխատաւորին գործիք՝ գործարանական բարդ մեխանիզմի մէջ: Միջնադարեան արհետաւորը սաստիկ զարգացած ինքնուրոյնութիւն ունէր. Նա պարծենում էր իր յատուկ վարպետական հմտութեամբ, իր բանիմացութեամբ—այդ բոլորը այլ են չը կայ: Մինչդեռ արհեստաւոր-վարպետի և նրա բանւորների մէջ ոչ մի էական, դասակարգային, տարբերութիւն գոյութիւն չունէր, այլ նրանք զանազանում էին իրարից միմիայն վարժութեան աստիճանով. այժմեան կապիտալիստ-ձեռնարկուի և նրա վարձկան բանւորների մէջ մի անանցանելի, խորը զասակարգային անդունդ է բացւած: Սրա պատճառը պէտք է դար-

ձեալ որոնել տնտեսական ընդհանուր յարաբերութիւնների մէջ: Եթէ մէկ արհեստաւոր հիմնաւոր կերպով սովորում էր իր ընտրած արհեստը, այսուհետեւ շատ հեշտութեամբ կարող էր անկախ վարպետ գառնալ: Իսկ այժմեան, միակողմանի վարժեցբած, գործարանական բանւորը մինչև իր կեանքի վերջը պիտի տառապէ միակողմանի զրազմունքի մէջ, առանց յոյս ունենալու երրեւ բարւոք վիճակի մէջ տեսնել իր անձնաւորութիւնը կամ իր զասակարգը: Թէկ գործերի յաջող ժամանակ սովորաբար բանւորի վարձն էլ աւելանում է, այնուամենայնիւ զիթսաւոր օգուտը միշտ էլ կապիտալիստն է ստանում: Որքան էլ բանւորը անկախ լինի իր ոյժերի գործածութեան տեսակէտից, այնուամենայնիւ նա ուրիշ բան չէ բայց եթէ անտեսական հանգամանքների ձեռքին մի խաղալիք:

Այդպիսի պայմաններում միթէ կարելի է զարման, որ բանւոր զասակարգը աւելի ու աւելի կազմակերպում է՝ տիրապետող զասակարգին ընդհանուր ոյժով դէմ գնելու համար, և ձգտում է առաջ բերել իրերի այնպիսի գրութիւն, որը կենսական միատեսակ պարմաններ ներկայացնէ ամենքի համար, և վերացնէ զասակարգային առանձնաշնորհումները և անհատական սեփականութիւնը: Բոլոր քաղաքակիրթ երկիրներում արդէն տարածւել է սօցիալական սկզբունքը. պարլամենտաները, հասարակական ժողովները, արձագանք են տալիս մեր ժամանակի սօցիալական պայքարին: Գերմանիայում, օրէնսդրական ատեանեները ի նկատի են առել ժամանակի պահանջները և գործի սկիզբը արդէն զրել են՝ բանւորներին պահպանող ու հովանաւորող օբէնսդրութեամբ: Աւելի բան երրև է մինչև այժմ, բոլոր հարցերի մէջ, սօցիալական հարցը կարևոր տեղ է ընտառմ:

Կապիտալիսմը մի կողմից ստեղծել է, ըստ երեսոյթին իրար հետ չը հաշտուող, դասակարգային դրութիւններ և կախւածական յարաբերութիւններ, իսկ միւս կողմից առաջ է բերել աւելի բարձր քաղաքակըրթական պայմաններ: Նա զարգացրել է արդիւնագործութիւնը անսպասելի կերպով, գուրս է հանել մեզ համար երկրի ներսում թագնւած գանձերը, մեծամեծ ձանապարհներ բացիլով ու երկաթուղիներ անցկացնելով, կրծատել է եռաւոր տարածութիւնները, և մեզ համար պատրաստել է իրական բարիքների այնպիսի առատ պաշար, որպիսին մեր նախահայրերի ամենասուր ֆանտազիան չեր կարող երեւակայել անդամ: Թէ և արդիւնագործութեան առաջացրած օգուտները նախ և առաջ ունենոր դասակարգերին են բաժին ընկնում, այնուամենայնիւ աննշան միջոցներ ունեցող անհատն էլ այսօր կարողանում է փոքր ի շատէ մարդավայել կերպարանք տալ իր կեանքին: Հագուստեղինը և ուրիշ անհրաժեշտ պարագաները—դեռ չենք հաշւում բազմատեսակ արդուղարդի տուարկանները—կապիտալիստական արդիւնագործութեան շնորհիւ այնպէս էժանացել են, որ նոյն իսկ ցածր խաւերին մատչելի են: Գործարանական բանորդի ավորուստը վերջին տասնամեակների ընթացքում, շնորհիւ կենսական պիտոյքների էժանութեան, աւելի նրբացել ու բարձրացել է, թէ ե դեռ շատ բան է պակասում:

Տասնուիններորդ դարը տնտեսական մի նոր պատշաճան է ստեղծել, իսկ քսաներորդ դարի պատշաճն է՝ ամենքի համար մատչելի դարձնել կապիտալիստական տնտեսութեան պատրաստած բարիքները, և անհետացնել կապիտալիսմից առաջացած վասաները, բժշկել նրա հասցրած վերըերը: Թէ ինչպէս պիտի գլուխ բերւի այս բարը, այդ մասին միայն միայնը բարձնուած է առաջանական արդիւնագործութիւնը հանրական դարձնել: Անհատական ձեռնարկութիւնն ու վաճառականութիւնը պիտի անհետանան, արդիւնագործութիւնը պիտի ընդհանրական գտնայ, որպէսզի ամենքի պահանջը լրացնէ: Այդպիսով, զուտ շահադիտական սկզբունքների վրա հիմնած կապիտալիստական տնտեսութեան պիտի փոխարինէ մի մեծածաւալ ինքնազործական կամ ինքնասպառողական տնտեսութիւն: Բայց թէ ինչ միջոցներով կարելի է իրականացնել յիշեալ ծրագիրը, այդ մասին զանագան կարծիքներ են տիրապետում սօցիալ-դեմօկրատական շրջաններում: Գերմանական սօցիալ դեմօկրատիան կամենում է սալատակին հասնել զուտ օրինական ձանապարհներով: Նա հաւատացած է, որ ժողովրդի լուսաւորութիւնն ընդհանրացնելով, հետզհետէ իր ձեռքը կը գցէ ամբողջ պարլամենտը, և յետոյ ձայների մեծամանութեամբ, սօցիալիստական օրէնքները կը հրատարակէ: Երփուրտի ծրագիրը (կզամւած 1891 թւին, Երփուրտի սօցիալիստական ժողովում) ընդունում է իրը բացարձակ ձշմարտութիւն, որ մեր ժամանակակից արդիւնագործութեան զարգացումը արդէն չափանցութեան է հասնել, ուստի մի ուժեղ արհաւիրք ովհուի տեղի ունենայ մօտիկ ապագայում: Սակայն այդ յոյսը մինչեւ օրս չի լականացաւ: Կապիտալիստական հասարակութիւնը չի էլ մտածում այս մասին, թէ ինքը իր հարստութեան ծանրութեան տակ կտապալւէ: Իսկ պարբերաբար կրկնւող տնտեսական ձգնաժամերը չը մնասեցին կապիտալիսմին: Ճգնաժամերից առաջացած վասար դարձեալ վերջիվերջոյ աշխատաւոր դասակարգի վրա է ընկնում, մինչդեռ կապիտալիստները իրանց մէջ

թիւններ կարող ենք անել: Սօցիալ-դեմօկրատիան ձգտում է վերջ տալ կապիտալիստական տնտեսութեան և նրա տեղը դնել սօցիալականը, այսինքն արդիւնագործութիւնը հանրական դարձնել: Անհատական ձեռնարկութիւնն ու վաճառականութիւնը պիտի անհետանան, արդիւնագործութիւնը պիտի ընդհանրական գտնայ, որպէսզի ամենքի պահանջը լրացնէ: Այդպիսով, զուտ շահադիտական սկզբունքների վրա հիմնած կապիտալիստական տնտեսութեան պիտի փոխարինէ մի մեծածաւալ ինքնազործական կամ ինքնասպառողական տնտեսութիւն: Բայց թէ ինչ միջոցներով կարելի է իրականացնել յիշեալ ծրագիրը, այդ մասին զանագան կարծիքիքներ են տիրապետում սօցիալ-դեմօկրատական շրջաններում: Գերմանական սօցիալ դեմօկրատիան կամենում է սալատակին հասնել զուտ օրինական ձանապարհներով: Նա հաւատացած է, որ ժողովրդի լուսաւորութիւնն ընդհանրացնելով, հետզհետէ իր ձեռքը կը գցէ ամբողջ պարլամենտը, և յետոյ ձայների մեծամանութեամբ, սօցիալիստական օրէնքները կը հրատարակէ: Երփուրտի ծրագիրը (կզամւած 1891 թւին, Երփուրտի սօցիալիստական ժողովում) ընդունում է իրը բացարձակ ձշմարտութիւն, որ մեր ժամանակակից արդիւնագործութեան զարգացումը արդէն չափանցութեան է հասնել, ուստի մի ուժեղ արհաւիրք ովհուի տեղի ունենայ մօտիկ ապագայում: Սակայն այդ յոյսը մինչեւ օրս չի լականացաւ: Կապիտալիստական հասարակութիւնը չի էլ մտածում այս մասին, թէ ինքը իր հարստութեան ծանրութեան տակ կտապալւէ: Իսկ պարբերաբար կրկնւող տնտեսական ձգնաժամերը չը մնասեցին կապիտալիսմին: Ճգնաժամերից առաջացած վասար դարձեալ վերջիվերջոյ աշխատաւոր դասակարգի վրա է ընկնում, մինչդեռ կապիտալիստակաները իրանց մէջ

աւելի ու աւելի սերտ կապակցութիւններ են կազմում
և այդպիսով կարողանում են պահպանել իրանց գիրքը։
Բայց ումանց կարծիքով, կապիտալիսմի յանկարչ
ծահաս խորտակման աղէաբ տեղի չի ունենալ, այլ կա-
պիտալիսմը հետզետէ կերպարանափոխելով վերջա-
պէս կը դառնայ սօցիալիզմը, թէ և այդ բանը չեն գի-
տակցում կապիտալիսմի պաշտպանները։ Պետութեան
անտեսական ձեռնարկութիւնները, փօստը, երկաթու-
ղիները, պետական հանքերը և արհեստանոցները—
սկզբունքով արդէն սօցիալիստական հիմնարկութիւն-
ներ են, թէ և առայժմ ծառայում են պետութեան կապի-
տալիստական շահերին։ Նոյնպէս արդիւնագործական
ու սպառողական ընկերակցութիւնները պարունակում
են իրանց մէջ սօցիալիստական հասարակութեան սաղ-
մերը։ Մի խօսքով փաստեր գտնելը զժւար չէ։ Բայց
իւրաքանչիւր տեսութիւն (տէօրիա) մռայլ կողմեր ու-
նի։ Մենք կարող ենք միայն զարգացման ընդհանուր
ընթացքը որոշել, բայց չենք կարող մուրհակ տալ ա-
պագայի համար, չինչ թէ ծանր սխալանըների մէջ
ընկնենք։ Մենք գիտենք, որ սօցիալիզմը պարունակում
է իր մէջ զարգանալու ընդունակ սաղմեր, բայց չը գի-
տենք, թէ այդ սաղմերը երբ պիտի աճեն և ինչ կեր-
պարանք պիտի ստանան։ Միս կողմէց մենք գիտենք,
որ ոչ մի անփոփիս «արժէք» գոյութիւն չունի, որ
մարդկային բոլոր հիմնարկութիւնները փոփոխութեան
ենթակայ են։ Այդպէս էլ կապիտալիսմը, նա ինքն
ըստ ինքեան վերցրած՝ մարդկային հոգու փասանեղ
ստեղծագործութիւններից մէկն է, բայց այն ազդեցու-
թիւնը, որ նա արել է մարդկային աշխարհայեացքի
վրա, շատ հեռու է փառանեղ լինելուց։ Եւ հէնց այդ
բանը ցոյց է տալիս, որ մարդկութիւնը պիտի ազատէ
նրանից, որպէսզի նրա ստեղծած ամուր պատւանդանի
վրա մի աւելի կատարելագործւած հասարակական շէնք
կառուցանէ։

«ՕՏԱՐԱԶԳԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ»

Բ Ա. Ժ Ա Ռ Դ Ա Գ Ր Ո Ւ Ի Թ Ե Ա. Մ Բ

Թիֆլիսում 6 ո., Թիֆլիսից գուրս ճանապարհա-
ծախոսով 7 ո.

Կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ—կանխավճար Թիֆ-
լիսում—1 ո., Թիֆլիսից գուրս 2 ո., մնացածը
ամեն հատոր ստանալիս ՄԵԿ-ՄԵԿ ուուրլի, վեր-
ջին 6-րդ հատորը—ձրի։

Լոյս տեսնելուց յետոյ վեցհատորեակը
կարմենայ 9 ո.։

Բաժանորդ գրել կարելի է Թիֆլիսում «Կենտ-
րոնական» և «Գուտտենբերգ» գրախանութներում
և «Հերմէս» տպարանում, Բագու «Сотрудникъ»

գրախանութում։

Ուրիշ բաղաւներից դիմել

«Ազգային գրադարան



NL0196606

ՀՐԱՏ. ԸՆԿԵՐ. „ԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՒ ԸՆԿ.“

Փողովրդական գրքոյի հիմքը

1. Թեմիքեան. Գ. Ուխտաւորներ, Աշուղի հէքիաթը. պատմւածքներ 7 կ.
2. Վերեսաւել Վ. Մի անմեղ մարդու սոսկալի մահը, թարգմ. Պ. Պոջեան 6 կ.
3. Շխեանց Ս. Մի մահ և Անառակը, պատմւածքներ 7 կ.
4. Երկման-Շատրեանից ժամագործի յիշողութիւնները, թարգմ. Շուշ. Խաժակնեան 8 կ.
5. Պրօֆ. Վ. Զօմբարս. Ինչու այժմ ամեն մարդ հետաքրքրուում է քաղաքատնտեսական և ընկերազարժական խնդիրներով թարգ. Ս. Թառայեան 10 կ.
7. Պրօֆ. Թ. Ալսելիս. Իրաւունքի ծագումը և պատմութիւնը, թարգ. Ս. Թառայեան 10 կ.

ՀԵՐԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱԲՀ

պատկերազարդ սերիա

1. Դագ. Աղայեանի. Դիւլնազ-տատի հէքիաթը, Այծառուր, Զանգի-Զրանգի, Մանուկ-Խան 15 կ.
2. Դագ. Աղայեանի. Եղեգնուհի, Անտառի մանուկը, Ալան-Բալա. 15 կ.

Կազմած երկուար միասին 45 կ.

Հ Ա Յ Բ Ա Ն Ա Ս Ե Ղ Ծ Ե Կ Բ

1. Յովիան. Թումանեանի Սասունցի Դաւիթը 15 կ.
2. » » Անուշ 15 »
3. » » Լեզենդներ 15 »
4. Շանքի Երգեր. 15 »
5. » » Լեռան աղջիկը 15 »

Օր. Հեղինե Մելիք-Հայկազեանի Մի պտոյա ձապրուում. իմ յուշերից և տպաւորութիւններից, 25 պատկերով 40 կ.

Գի՞նն է 12 կմ.

Դիմել ԳՐԱՎԱԾԱՌՆԵՐԻՆ

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, Տօվարություն «Ծ. Լիսիջան և Կ.» (Բեբուտովսկայ ոլ. 25) 4
Գուգարագիւն (Մալատովսկայ ոլ. 15).